«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

ԵՐԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2014

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի գյուղատնտեսական համալսարանի (ԵԳՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակի աջակցությամբ: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 Նիդեռլանդներից ժամանած փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Այս զեկույցն անդրադառնում է ԵԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանը՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշների:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 2

ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ 9

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ 17

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 17

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 19

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 22

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 25

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 29

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 33

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 35

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 39

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 41

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 44

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 47

ՀԱՎԵԼՎԱԾ 1.ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 48

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ՕՐԱԿԱՐԳ 49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 50

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 54

ԱՄՓՈՓՈՒՄ

ԵԳՀ Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանը միտված է ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, անհրաժեշտ գիտելիքներով և համապատասխան կարողություններով օժտված բակալավրի և մագիստրոսի որակավորումներով մասնագետների պատրաստմանը՝ ի նպաստ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:

Ներկայումս համալսարանը արտոնված է իրականացնել կրթական գործունեություն 5 մասնագիտությունների գծով՝ 1. հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա, 2. անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, 3. իրավագիտություն, 4. ֆինանսներ, 5. դիզայն, որոնցից առաջին չորսը նաև մագիստրոսական կրթություն: ՄԿԾ-ները մասամբ են համահունչ համալսարանի առաքելությանը: Համալսարանում ՄԿԾ-ների, մասնավորապես, ուսումնական պլանների մշակման ու իրականացման, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համընդհանուր մոտեցում չկա: Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցումը, սակայն անցումը դրան դեռևս ավարտուն չէ: Հարկ է նշել, որ ակնկալվող ուսումնառության արդյունքներին հասնելու համար համալսարանում հիմնականում կիրառվում են դասավանդման և ուսումնառության դասական, դասախոսակենտրոն մեթոդները, որոնք այնքան էլ չեն նպաստում ուսանողակենտրոն կրթության իրականացմանը: Բուհը դեռ շատ անելիքներ ունի ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքների սահմանման հարցում: Վերջիններիս ընդհանրական նկարագրված լինելը և մանրամասն քարտեզագրում չպարունակելը, դժվարեցնում է առավել համակարգված աշխատանքը: Հստակ չի երևում ուսումնառության վերջնարդյունքների կապը գնահատման համակարգի հետ և թե որքանով են դասավանդման և ուսումնառության մեթոդները արդյունավետ ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից: Չնայած ԵԳՀ դասախոսների և ուսանողների մեծ մասը գոհ է գնահատման ներկա համակարգից այնուամենայնիվ, ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման բացակայությունը և գրագողության դեմ պայքարի մեխանիզմների ոչ հստակությունը չեն կարող երաշխավորել գնահատման օբյեկտիվությունը և նպաստել ազնիվ ակադեմիական միջավայրի ձևավորմանը: Համալսարանը կարևորում է ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի վերանայումը, այնուամենայնիվ, ԵԳՀ-ն ՄԿԾ-ների բարելավման հետ կապված գործընթացներ չի իրականացրել և բուհում չկա ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն, բացառությամբ դասալսումների:

ԵԳՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ առկա չեն: Համալսարանը չունի համապարփակ քաղաքականություն, որը կներառի հետազոտությունը և գիտական մտածողությունը կրթական ծրագրերի շրջանակում:

Համալսարանում դասախոսական կազմի համալրումը հիմնականում իրականացվում է հարցազրույցով: Գործող պրոֆեսորադասախոսական կազմն աշխատում է պայմանագրային հիմնական և արտաքին համատեղության հիմունքներով: Ներկայումս ԵԳՀ-ն չունի մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ ձևակերպված պահանջներ: Փորձագիտական խումբը առավել մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ բուհում աշխատում են թողարկվող

մասնագիտությունների գծով համապատասխան որակավորումներ ունեցող սակավաթիվ մասնագետներ. հաճախ միևնույն դասախոսը վարում է մի քանի դասընթացներ (3-9), որը միանշանակորեն ազդում է դասավանդման որակի վրա: ԵԳՀ դասախոսական կազմի գնահատումը իրականացվում է դասալսումների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումների միջոցով: Բուհում մինչ օրս չեն իրականացվել դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու արդիականացմանն ուղղված վերապատրաստումներ: Հիմնականում դասախոսական կազմը մասնակցում է այլ բուհերի կամ կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին:

Կարծես, շենքային պայմանները (լսարաններ) բավարար են տեսական և որոշ գործնական դասընթացներն իրականացնելու համար, չնայած որ լսարանները հագեցած չեն առդիովիզուալ սարքավորումներով, չկա ուսանողներին հասանելի ինտերնետ: ԵԳՀ լաբորատորիաներում առկա սարքավորումները բավականին հին են և բավարար չափով չեն կարող նպաստել կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Գրադարանը և տեղեկատվական կենտրոնը կարևոր տարրեր են հետազոտական միջավայր և մշակույթ ստեղծելու գործում, իսկ դրանց ռեսուրսային ապահովվածության մակարդակը բուհում խիստ ցածր է:

Համալսարանում առաքելության ու նպատակների, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման և շարունակականության ապահովման նպատակով ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականության բացակայությունը թուլացնում է ֆինանսական ռեսուրսների նպատակային և ուղղորդված օգտագործման արդյունավետությունը:

Բուհում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության չափանիշներ, այնուամենայնիվ, վերջիններիս թափանցիկությունը երաշխավորված չէ: Մտահոգիչ են նաև ինքնավերլուծության զեկույցում նշված հարցման արդյունքները, ըստ որի՝ բուհի հարցված ուսանողների 48.75%-ը գտնում է, որ համալսարանում ընդունելությունը թափանցիկ չէ: Բուհում ուսանողների կրթական կարիքների վերհանման ու կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ հստակ մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է համալսարանի գործունեության գնահատման հնարավորությունը: Չնայած բուհում չկա ուսանողների լրացուցիչ պարապմունքների կազմակերպման, խորհրդատվություն տրամադրելու հստակ համակարգ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը դրական է գնահատում ոչ ֆորմալ կերպով իրականացող ուսանող-դասախոս, շփումները: Ուսանողների ուղղորդումը կամ օժանդակությունն իրականացվում է ոչ համակարգված կերպով: Ուսանողները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, չնայած այն հանգամանքին, որ համալսարանի կողմից թողարկվող մասնագիտությունների ցանկում կան կիրառական, գյուղատնտեսական ուղղվածության մասնագիտություններ: Համալսարանում առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ոչ մի ծառայություն չի իրականացվում:

Համալսարանի ղեկավարությունը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը, այնուամենայնիվ հստակ չէ, թե բուհը ինչպես է պատրաստվում ապահովել համապատասխան միջավայր: Համալսարանը չի իրականացնում համատեղ կրթական և հետազոտական ծրագրեր: Համալսարանը պլանավորում է մշակել միջազգայնացման ռազմավարություն: Ուսանողների կրթական, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների անցկացման նպատակով բուհը պայմանագրեր է կնքել մի շարք լաբորատորիաների և կազմակերպությունների հետ: Որոշ պայմանագրեր են կնքվել միջազգային կազմակերպությունների հետ, սակայն այդ պայմանագրերի շրջանակում ոչինչ չի իրականացվել: Մտահոգիչ է նաև ուսանողների և

դասախոսների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, քանի որ վերջինս լուրջ խոչընդոտ է բուհի գործընթացների միջազգայնացման, միջազգային կառույցների հետ հաղորդակցության և շարժունության տեսանկյունից:

Համալսարանում առկա են կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզ և այդ մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթեր: Այնուամենայնիվ, կառավարման համակարգի ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով: Բոլոր տեսակի պլանավորումների իրականացման և մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը: ԵԳՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար ներկայումս հիմնական կիրառվող մեխանիզմը սոց. հարցումներն են, որոնց անցկացման նպատակները, պարբերականությունը, մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցվածների ընդգրկման շրջանակը թույլ չեն տալիս հարցումները համարել որպես ներքին շահակիցների կարծիքների վերհանման արդյունավետ գործիք: Բուհում մասնագիտությունների և կրթական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց հիման վրա կայացված որոշումների օրինակների սակավությունը, ինչպես նաև մեխանիզմների բացակայությունը հարցականի տակ է դնում կառավարման արդյունավետությունը, քանի որ առանց հիշյալ տեղեկատվության անհնար է գնահատել համալսարանի կրթական գործունեությունը, ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռքբերումը, դասավանդման մեթոդների արդյունավետությունը, կառավարչական որոշումների հիմնավորվածությունը:

Համալսարանի բոլոր մակարդակներում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է արտաքին պահանջներով: Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով ԵԳՀ-ն այժմ ներդնում է որակի ներքին ապահովման համակարգ, որը կայացման փուլում է: Տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ գործընթացների կազմակերպման համար: Թեև ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն պարզ չէ՝ արդյոք որակի ներքին ապահովման այս մոտեցումները բավարար և արդյունավետ են ողջ համալսարանի համար: Ակնհայտ է, որ որակի մշակույթն ամբողջապես ձևավորված չէ, և որ ՊԻՍԲ շրջափուլը դեռ փակված չէ:

Հաստատության ուժեղ կողմերն են

— Ուսանողների ներգրավվածությունը կառավարման բոլոր մակարդակներում գովելի է: Ուսանողները տեղեկացված են և մասնակցում են որոշումների կայացման գործընթացում:
— Դասախոսները մոտիվացված և նվիրված են: Ուսանողների բավարարվածությունը դասախոսներից, ընդհանուր առմամբ, բավականին բարձր է: Փորձագիտական խումբը նկատեց, որ անձնակազմը սերտ համագործակցում է, իսկ խնդիրները լուծվում են միասնականորեն:
— Ղեկավարությունն անմիջական շփվում է ներքին շահակիցների հետ: Բուհի ղեկավարությունը լավատեղյակ է ներքին գործընթացներին:
— Պրոֆեսորադասախոսական անձնակազմը հետաքրքրված է ուսանողների առաջընթացով: Ոչ ֆորմալ կերպով իրականացվում են խորհրդատվություններ:
— Հայաստանի ազգային գրադարանի հետ կնքված պայմանագիրը լավ սկիզբ է ուսանողների և դասախոսների՝ ժամանակակից գրադարան մուտքն ապահովելու գործընթացում:
— Ողջունելի է տեղական կազմակերպությունների և լաբորատորիաների հետ կնքված համաձայնագրերի առկայությունը, քանի որ վերջիններս ուսանողների պրակտիկաների

կազմակերպմանը և գործնական հմտությունների զարգացմանը միտված առաջին քայլն են:

— ՊԴԱ կազմի համար օտար լեզվի վերապատրաստման դասընթացների նախաձեռնումը կարևոր քայլ է բուհի միջազգայնացման զարգացման ուղղությամբ:
— Որակի ապահովման նորաստեղծ համակարգը որոշակի արդյունքներ է գրանցել, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետագա բարելավումների համար: Կարճ ժամանակահատվածում որոշակի առաջընթաց է գրացվել:

Հաստատության թույլ կողմերն են.

— Դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում բավարար չափով համակարգված չէ: Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարելավման կարիք ունի:
— Դասընթացի ուսումնառության արդյունքների, դասավանդման մեթոդների և գնահատման համակարգի միջև կապն ամուր չէ:
— Համալսարանն որդեգրել է ուսումնառության ուսանողակենտրոն մոտեցումը, որը կրթությունը ժամանակակից դարձնելու ամենակարևոր գրավականներից մեկն է: Սակայն անցումը դեռևս ամբողջովին իրականացված չէ:
— Բուհում թողարկվող մասնագիտությունների գծով համապատասխան որակավորումներ ունեցող մասնագետները սակավաթիվ են:
— Բուհը դեռևս ամբողջովին չի ընդունում, որ հետազոտությունը կրթության մեջ ուսումնառության հիմնական մեթոդն է:
— ԵԳՀ-ի լաբորատոր սարքավորումները բավականին հին են և բավարար չափով չեն կարող նպաստել ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:
— Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության համար համալսարանում բացակայում են համապատասխան պայմանները"
— Լսարանները հագեցած չեն աուդիովիզուալ սարքավորումներով, բուհում չկա ուսանողներին հասանելի ինտերնետ:
— ԵԳՀ կայք էջը չի պարունակում բուհի գործունեության և առօրյայի մասին ամբողջական տեղեկատվություն:
— Բուհում տեղեկատվության հավաքագրման էլեկտրոնային համակարգ չկա:
— Միջազգայնացման զարգացման գործընթացում անգլերենի լեզվի ցածր իմացությունը լուրջ բացթողում է: Դասախոսական կազմի անգլերեն լեզվի իմացությունը բավական ցածր է:
— Համատեղ կրթական ծրագրերի և հետազոտական նախագծերի իրականացման հիմքեր բուհում չկան:
— Որակի մշակույթը ամբողջովին չի ձևավորվել: ՊԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ, և իրականացված գնահատումների արդյունքները դեռևս հստակ չեն:
— Որակի ապահովման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածության մակարդակը ցածր է:

Հիմնական խորհրդատվություններ

— ԵԳՀ պետք է վերանայի իր առաքելությունը՝ վերջնարդյունքների և գործողությունների մակարդակում ավելի հստակ դարձնելով և ծավալած գործունեությունը համապատասխանեցնելով առաքելությանը,
— Արտաքին շահակիցների (աշխատաշուկա և շրջանավարտներ) ներգրավվածությունը բուհի կառավարման գործընթացներում բարելավման անհրաժեշտություն ունի:

— Համալսարանի աշխատակազմը պետք է համալրվի արհեստավարժ կադրերով, ովքեր կհամապատասխանեն տվյալ պաշտոնին ներկայացվող մասնագիտական որակներին և պահանջներին:
— Պետք է հստակ սահմանել և հաստատել բոլոր ստորաբաժանումների/բաժինների գործառույթները, պատասխանատվությունները և իրավասություններն:
— ՄԿԾ-ները պետք է վերանայվեն (ներառել շնորհվող որակավորումների նկարագրությունները, հստակ սահմանել ակնկալվող ուսումնառության արդյունքները)՝ համապատասխանեցնելով վերջիններս բուհի առաքելությանը, խթանելով ուսանողակենտրոն ուսումնառությունը և հաշվի առնելով շահակիցների կարիքները և աշխատաշուկայի պահանջները:
— Բուհը պետք է մշակի դասավանդման ու ուսումնառության մեթոդներն ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականությունն ընթացակարգեր:
— Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության բարձրացումը հրատապ քայլ է բուհի համար:
— Ուսանողներին հետազոտական գործունեության նախապատրաստելը պետք է բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մասը լինի:
— Բուհը պետք է վերանայի դասախոսների հավաքագրման իր քաղաքականությունը: Մասնավորապես՝ առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել ՊԴԱ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների խստացմանը: Անհապաղ պետք է դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպել:
— Համալսարանը պետք է պատշաճ ռեսուրսներ հատկացնի ՊԴԱ կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման նպատակով և վերջիններիս հնարավորություն ընձեռի ներգրավվել հետազոտական աշխատանքներում: Կարևոր է դասախոսների կատարողական գնահատման, առաջխաղացման ժամանակ հաշվի առնել նաև նրանց հետազոտական գործունեությունը: Հետազոտական բաղադրիչ պետք է ավելացվի նաև կրթական ծրագրերում;
— Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս հետագայում ներդնել տվյալների հավաքագրման գործընթացի վերահսկման թվայնացված համակարգ:
— Խրախուսվում է բարելավել ենթակառուցվածքային ռեսուրսները՝ մասնավորապես՝ լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունը, գրադարանային ֆոնդի համալրումը մասնագիտական գրականությամբ, ամսագրերով և էլեկտրոնային ռեսուրսներով:
— Բուհը, իր ծավալած գործընթացները ներքին և արտաքին շահակիցների առջև թափանցիկ դարձնելու նպատակով, պետք է ձեռնամուխ լինի հասարակության հետ սերտ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման մեխանիզմերի մշակմանը:
— մշակել քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք ուղղված կլինեն համալսարանում փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելուն;
— Ուսանողներին և դասախոսական կազմի ներկայացուցիչներին ներգրավել միջազգային հետազոտական ծրագրերում, ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստող դրամաշնորհային ծրագրերում:
— Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ինստիտուցիոնալ բոլոր մակարդակներում փակել ՊԻՍԲ շրջափուլը: Որակի ապահովման ձեռնարկի մշակումը կարևոր քայլ է բուհի համար:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Համալսարանի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտարկումներն ու խորհրդատվությունը:

Դիտարկումներ

1. ԵԳՀ գործունեությունն անմիջականորեն կապակցված չէ բուհի առաքելության հետ, քանի որ հինգ մասնագիտություններից երեքը (Իրավագիտություն, Ֆինանսներ, Դիզայն) գյուղատնտեսական ուղղվածություն չունեն:
2. Առաքելությունը բավականին ընդհանրական է, բացակայում են ռազմավարական առաջնահերթությունները և նպատակների ձեռքբերումը չափող մեխանիզմները: Առաքելությունն ու դրա իրականացման գործընթացներն ավելի շատ միտված են ներքին շահակիցներին և չեն արտացոլում արտաքին շահակիցների կարիքները, աշխատաշուկայի պահանջն ու միջազգային զարգացումները:
3. Համալսարանի կառավարման համակարգը ճկուն չէ, իսկ ֆինանսական ռեսուրսների սղությունը թույլ չի տալիս միջազգայնորեն մրցունակ դառնալ:
4. Ըստ կրթական ծրագրերի համալսարանի ֆինանսական ռեսուրսների բաշխման բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում միջազգային ասպարեզում ՄԿԾ-ների մրցունակ լինելու տեսանկյունից: Ներկայումս առաջարկվող կրթական ծառայությունները միջազգային չափորոշիչներին չեն համապատասխանում: ՄԿԾ-ները չեն նպաստում միջազգային շարժունությանը:
5. Ծրագրերն ավելի շատ ավանդական են դասախոսակենտրոնության և առարկայակենտրոնության տեսանկյունից: Ավելի մեծ շեշտադրում կատարվում է տեսական գիտելիքի վրա, քան հմտությունների և մասնագիտական վարքագծի ձևավորման: Եթե բուհը նպատակադրված է ծրագրերը ժամանակակից դարձնել, պետք է որդեգրի ուսանողակենտրոն մոտեցում:
6. Ակնկալվող ուսումնառության արդյունքների և գնահատման համակարգի միջև կապը հստակ չէ, հատկապես հմտությունների և մասնագիտական վարքագծի գնահատումն ունի հետագա բարելավման կարիք:
7. Կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին համակարգը խճճված է:
8. Բուհում ուսանողների կրթական կարիքների վերհանման ու կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ հստակ մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է համալսարանի գործունեության գնահատման հնարավորությունը:
9. Եվրոպական Բարձրագույն Կրթության տարածք ինտեգրվելու տեսանկյունից բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հմտությունները և կարողությունները բավարար չեն:
10. Տվյալների հավաքագրումը հիմնականում իրականացվում է թղթային տարբերակով, որը տվյալների վերլուծությունը բարդացնում է, իսկ արդյունավետությունը՝ սահմանափակում:
11. Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներն անկատար են և բարելավման անհրաժեշտություն ունեն:
12. Որակի ապահովման նորաստեղծ համակարգը որոշակի արդյունքներ է գրանցել: Ներքին շահակիցները հիմնականում ներգրավված են ՈԱ գործընթացներում, այնինչ արտաքին շահակիցների ներգրավումը բարելավման կարիք ունի:

Խորհրդատվություն

1. Խորհուրդ է տրվում այցելել գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող եվրոպական համալսարաններ՝ նմանատիպ բուհերին ներկայացվող եվրոպական չափանիշներին ծանոթանալու նպատակով:
2. Համալսարանը պետք է փորձի իր ներքին կառուցվածքը դարձնել ավելի պարզ, համապատասխանաբար՝ առավել արդյունավետ: Համալսարանը կարող է ընտրել ճկուն կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կլինի ավելի համակարգված, ոչ բյուրոկրատական և կշարունակի հիմնվել կոլեգիալ ակադեմիական մշակույթի վրա:
3. Առանց լուրջ ֆինանսական և մարդկային ռեսուրսների, կառավարման կառուցվածքի բարելավումն իրատեսական չէ: Այն արմատական բարեփոխումների կարիք ունի:
4. Համալսարանը կրթական գործընթացի այնպիսի պլանավորման անհրաժեշտություն ունի, որը կներառի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը, ինչպես նաև դասավանդման ու ուսումնառության ժամանակակից մեթոդների ներդրմանը միտված բուհի մոտեցումները: Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ինստիտուցիոնալ մակարդակում մշակել կրթական հայեցակարգ, որը կանդրադառնա հետազոտությանը և միտված կլինի կրթությանը և դասավանդողների վերապատրաստմանը: Ժամանակակից կրթական հայեցակարգի առանցքային կետերը կարող են լինել՝
   - ուսումնական պլանի՝ միջազգային բենչմարքինգ անցած նախագիծ, որը կպարունակի նախօրոք սահմանված անկնկալվող ուսումնառության արդյունքները,
   - ուսանողակենտրոն ուսումնառություն՝ ուսումնառողների ինտերակտիվ մասնակցությամբ և փոքր խմբերով ուսումնառությամբ,
   - մասնավոր դեպքերի/խնդիրների վրա հիմնված ուսումնառություն,
   - բակալավրի հենց առաջին կուրսից հետազոտության և կրթության ամուր փոխկապակցում:
5. Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս իրականացնել միջազգային բենչմարքինգ ինստիտուցիոնալ մակարդակով: Ինչպես նաև միջազգայնացումը զարգացնելու նպատակով համալսարանը կարող է հետամուտ լինել առաջարկվող ծրագրերը (ծրագրերի մի մասը) անգլերենով դասավանդելուն:
6. Խրախուսվում է միջազգային ուսանողների ներգրավումը՝ անգլերեն լեզվով դասավանդվող մրցունակ կրթական ծրագրեր առաջարկելով:
7. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում իրենց տեղն ունենալու համար պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջազգային կողմնորոշումը, անգլերենի իմացության մակարդակը, ինչպես նաև գիտական աստիճանների առկայությունը անհրաժեշտ նախապայմաններ են: Հայաստանյան այլ հաստատությունների հետ համագործակցությունը կարող է շահավետ միջոց լինել վերոգրյալ նպատակներին հասնելու համար: Եվրոպական չափորոշիչներին համապատասխանելու համար պետք է մշակվեն պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ:
8. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմն իր ժամանակի նվազագույնը 20%-ը պետք է հատկացնի գիտահետազոտական աշխատանքին: Առանց հետազոտական աշխատանքի, համալսարանը չի կարող գործունեություն ծավալել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում:
9. Ենթակառուցվածքային ռեսուրսների բարելավումն անհրաժեշտ նախապայման է որակյալ կրթություն տրամադրելու համար: Բուհը իր լաբորատոր բազան պետք է

հարստացնի ժամանակակից սարքավորումներով, իսկ լսարանները՝ աուդիովիզուալ տեխնիկայով:

10. Համալսարանը պետք է ավելի ամուր կապեր հաստատի գործատուների և հասարակության հետ՝ որպեսզի իրականացնի հասարակությանը ծառայություն մատուցելու իր պատասխանատու դերը: Միջազգային տեսանկյունից, ինստիտուցիոնալ մակարդակում խորհրդատուների խորհուրդ ունենալն անհրաժեշտ նախադրյալ է:
11. Գործատուների, միջնակարգ դպրոցների և կառավարության հետ սերտ հարաբերություններն անհրաժեշտ է զարգացնել և ինստիտուցիոնալ հենքի վրա դնել: Փորձագիտական խումբը ցանկանում է խրախուսել համալսարանին մշակել ռազմավարական համագործակցության հայեցակարգ արտաքին շահակիցների և հասարակության հետ: Համալսարանը նաև պետք է բարելավի շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները: Այդ ամենն իրականացնելու համար նպաստավոր կլինի սերտ համագործակցումը Հայաստանի այլ համալսարանների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:
12. Համալսարանի անձնակազմը պետք է մասնակցի որակավորման բարձրացման դասընթացներին ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով՝ որակի կառավարման վերաբերյալ տեսակետ ձևավորելու, ինչպես նաև հմտությունների զարգացման նպատակով: Համալսարանը պետք է բենչմարք իրականացնի բոլոր այն նպատակների համար, որոնց ուզում է հասնել՝ ինտենսիվ կերպով ուսումնասիրելով կրթության որակի և որակի ապահովման միջազգային ստանդարտները:

11 հուլիսի 2014թ.

Աղավնի Հակոբյան
Փորձագիտական խմբի ղեկավար

Անի Մկրտչյան
Փորձագիտական խմբի համակարգող

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ[1]

Երևանի գյուղատնտեսական համալսարանի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի անդամների կողմից (տե՛ս կից հավելված 1, փորձագետների ինքնակենսագրականները)՝

— **Աղավնի Հակոբյան** ՝Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
— **Թեռ Վաբելս՝** Ուտրեխտի համալսարանի, ընդունելության գծով դեկան, կրթության պրոֆեսոր
— **Գարեգին Համբարձումյան՝** Երևանի պետական բժշկական համալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ, անասնաբուժական գիտությունների թեկնածու,
— **Գայանե Մարմարյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու,
— **Լուիզա Աբրահամյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հակաճգնաժամային կառավարման ֆակուլտետի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ՝ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու Անի Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողն ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականները:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի գյուղատնտեսական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշումն ընդունելուց հետո ՈԱԱԿ-ի, ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնի և բուհի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով բուհի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների (Ռ. Թոփչյան, Հ. Մարզպանյան) կողմից իրականացվեցին հինգ վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵԳՀ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցից մեկ շաբաթ առաջ փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ-ի տնօրենի և փորձագիտական գնահատման գործընթացի համակարգողի մասնակցությամբ: Նախապատրաստական այցի ընթացքում համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2014թ. մայիսի 12-ից 16-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Թեո Վաբելսի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի և հիմնադիրների հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին ՈԱԱԿ-ում կայացած քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ ***անբավարար և բավարար:*** Ընդ որում այդ սանդղակով համալսարանի ինքնավերլուծության գնահատումն իրականացվել է ըստ յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առանձին չափորոշիչների, իսկ փորձագիտական զեկույցն՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական գնահատման զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կցված փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը՝ հիմնվելով բուհի կողմից ստացված դիտողությունների վրա:

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն - Երևանի գյուղատնտեսական համալսարանը (ԵԳՀ) կրթական մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է: ՄՈՒՀ-ը գործում է 1992 թվականից, ստեղծվել է նախկին Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի բազայի հիման վրա: Մինչ 2006 թվականը այն կրել է «Երևանի Կիրառական Բիոտեխնոլոգիայի ինստիտուտ» անվանումը, սակայն բուհի խորհրդի որոշմամբ այն վերանվանվել է և սկսած 2006 թվականից կրում է Երևանի գյուղատնտեսական համալսարան անվանումը:

2007 թ.-ին հաստատվել, իսկ 2013 թվականին վերանայվել է ԵԳՀ առաքելությունը: ԵԳՀ առաքելությունն է՝ ***պատրաստել ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան անհրաժեշտ գիտելիքներով և համապատասխան կարողություններով օժտված՝ բակալավրի և մագիստրոսի որակավորումներով մասնագետներ՝ ի նպաստ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:***

Կրթություն - 2013-2018 ռազմավարական ծրագրում ՄՈՒՀ-ը ամրագրել է կրթական գործընթացի բարելավմանը միտված հետևյալ նպատակները՝

- Որակի ապահովման քաղաքականության մշակումը և ներդրումը կրթական գործընթացում:
- Լիովին անցում ուսանողակենտրոն ուսուցմանը:
- Աշխատաշուկայի պահանջներին և մասնագիտական կրթական ծրագրերին համապասխան մասնագետների պատրաստում:

Համաձայն ՀՀ ԿԳՆ-ի կողմից ԵԳՀ-ին տրված լիցենզիայի (17.01.2013) բուհն իրավունք ունի բակալավրի կրթական ծրագրով իրականացնել հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա, անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, իրավագիտություն, ֆինանսներ, դիզայն մասնագիտություններով կրթություն, որոնցից առաջին չորսով նաև՝ մագիստրոսական կրթություն: 2013 թ.-ից ԵԳՀ-ում գործում է որակավորումների երկաստիճան համակարգ՝ բակալավր և մագիստրոս: Այժմ բուհի բակալավրիատում ուսումնառում են 235 առկա և 668 հեռակա ուսանողներ, մագիստրատուրայում՝ 6 առկա ուսանողներ:
Ուսանողների կրթական, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպման նպատակով բուհը մի շարք պայմանագրեր ունի տեղական կազմակերպությունների հետ:

Ներկայումս բուհում աշխատում են 47 դասախոսներ, որոնցից 30-ը հիմնական դասախոսներ են, 17-ը՝ համատեղությամբ աշխատողներ: Բուհի ընդհանուր դասախոսական անձնակազմի մոտ 50 %-ը գիտությունների թեկնածու է, 2-ը՝ պրոֆեսորներ: Վարչական մասում ընդգրկված են 18 աշխատակիցներ:
Կադրային ներուժի զարգացման նպատակին հասնելու համար բուհը նախատեսում է 2013-2018 թթ. ընթացքում իրականացնել հետևյալ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ՝

- *Հնավորել վերապատրաստումների իրականացման և համակարգման գծով հանձնաժողով:*
- *Մշակել կադրային ներուժի զարգացման քաղաքականություն և ընթացակարգ:*
- *Ուսումնական գործընթացի կազմակերպման համար նյութատեխնիկական բազայով համալրում:*
- *Կադրերի վերապատրաստումների գործնական կիրառական և արդիական ուղղվածության ապահովում:*

- *Վերապատրաստվողների և վերապատրաստողների միջև հետադարձ կապի գործընթացի մշակում և ապահովում:*

Հետազոտություն - 2013-2018 ռազմավարական ծրագրում ՄՈՒՀ-ը ամրագրել է գիտական գործունեության զարգացմանը և արդիականացմանը միտված հետևյալ նպատակները՝

- *Գյուղատնտեսության ոլորտում կրթական և գիտատեխնիկական ներուժի զարգացում,*
- *Հետազոտական աշխատանքների իրականացման համար ընթացակարգերի մշակում և գիտամեթոդական աշխատանքների բազայի ստեղծում:*

Միջազգայնացում – ԵԳՀ-ն միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման ուղղությամբ 2013-2018 ռազմավարական ծրագրում նախատեսում է իրականացնել հետևյալ քայլերը՝

- *Մշակել արտաքին կապերի հաստատման քաղաքականություն և ընթացակարգեր, որը միտված կլինեն ԵԳՀ ուսանողների և դասախոսների միջազգայնացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն,*
- *Զարգացնել ԵԳՀ սոցիալական համագործակցությունը,*
- *Բարելավել ԵԳՀ մասին լրատվության ապահովումը,*
- *Զարգացնել արտաքին հաշվետվողականության համակարգը և ապահովել ներբուհական գործընթացների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար,*
- *Մշակել ԵԳՀ վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեխանիզմ՝ նրա գործունեությունը հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով:*

Որակի ապահովում - 2011-12 ուսումնական տարվա սկզբից բուհում հիմնադրվել է կրթության որակի ապահովման և ներքին աուդիտի կենտրոն: Բուհի ռազմավարական ծրագրում ամրագրված են հետևյալ հիմնական նպատակները՝ միտված որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի բարելավմանը՝

- *Մշակել ԵԳՀ-ի կրթության որակի ապահովման քաղաքականությունը և համապատասխան ընթացակարգերը, ձևավորել որակի ապահովման ձեռնարկ:*
- *Որակի ապահովումը դարձնել մշակույթ համալսարանի բոլոր օղակների համար:*
- *Վերանայել և բարելավել որակի ներքին ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մեխանիզմները՝ ավելի լայնացնելու նրանց ընդգրկվածությունը:*
- *Մշակել որակի ապահովման մասին օբեկտիվ տեղեկատվություն տրամադրող, ինչպես նաև համապատասխան գնահատման մեխանիզմների վերաբերյալ թափանցիկություն ապահովող մեխանիզմներ՝ ներքին և արտաքին շահակիցների համար:*
- *Համակարգել և կանոնակարգել տեղեկատվության հավաքման քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնք կձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման համար*

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մասնագիտական ուսումնական հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին

2007 թվականի մարտի 7-ին ԵԳՀ ռեկտորի կողմից հաստատվել է Երևանի գյուղատնտեսական համալսարանի առաքելությունը, առաքելությունից բխող նպատակային ծրագրերի իրականացման ժամանակացույցը: 2013 թվականին հաստատվել է ԵԳՀ 2013-18 թվականների նոր ռազմավարական ծրագիրը, որում ամրագրվել են համալսարանի նոր առաքելությունը, ռազմավարական նպատակները և խնդիրները: ԵԳՀ առաքելությունը միտված է ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, անհրաժեշտ գիտելիքներով և համապատասխան կարողություններով օժտված բակալավրի և մագիստրոսի որակավորումներով մասնագետների պատրաստմանը՝ ի նպաստ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը: Առաքելությունը բավականին ընդհանրական է, բացակայում են ռազմավարական ծրագրով ամրագրված գերակայությունների և նպատակների չափման մեխանիզմները, նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքներն ունեն առավել հստակեցման կարիք: Բացակայում է գործողությունների հստակ ծրագիրը, որում նշված կլիներ, թե ռազմավարական յուրաքանչյուր նպատակի համար ամենամյա կտրվածքով որքան միջոցներ են նախատեսված և կառուցվածքային որ ստորաբաժանումն է անմիջականորեն պատասխանատու վերջինիս իրականացման համար:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները

Համալսարանը, կարևորելով ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտումը և ուսումնասիրությունը, նախատեսում է մշակել և ներդնել շահակիցների կարիքների վերհանման անհրաժեշտ մեխանիզմներ և ընթացակարգեր: Փորձագիտական խումբը բավարար հիմքեր տեսավ ռազմավարական նպատակների ձևավորման հարցում ներքին շահակիցների ներգրավվածության, մինչդեռ արտաքին շահակիցները որևէ կերպ ներգրավված չեն եղել առաքելության մշակմանն ու վերանայմանը, և վերջիններիս կարիքներն արտացոլված չեն բուհի առաքելության մեջ: Համակարգված գործընթացներն այս ուղղությամբ բացակայում են: Ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը հասկանալու համար բացակայում են բավարար հիմքերն ու խորքային վերլուծությունը: Աշխատաշուկայի վերլուծություն չի իրականացվել: Բացակայում են արտաքին շահակիցների կարիքների վերհանման և ներգրավման մեխանիզմները, ինչպես նաև ռազմավարական նպատակների ու խնդիրների ձևակերպմանը վերջիններիս մասնակցության հիմքերը:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր

Բուհում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման նպատակով մշակվել է քաղաքականություն, որը, այնուամենայնիվ, կրում է ընդհանրական բնույթ, հետագա հստակեցման ու բարելավման կարիք ունի և վերջինիս

արդյունավետությունը ուսումնասիրված չէ: Փորձագիտական խումբը նկատեց, որ համալսարանը սկսել է իրականացնել ռազմավարական նպատակների ընթացիկ մշտադիտարկում: Այնուամենայնիվ, գնահատման և բարելավման համընդհանուր մոտեցում և հստակ ու արդյունավետ մեխանիզմներ դեռևս չկան:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի կողմից կրթական ծառայությունների մատուցման հիմնական նպատակը պետք է լինի առաքելությանը համապատասխան գործունեության իրականացումը: Մինչդեռ ԵԳՀ գործունեությունն անմիջականորեն կապակցված չէ բուհի առաքելության հետ, քանի որ հինգ մասնագիտություններից երեքը (Իրավագիտություն, Ֆինանսներ, Դիզայն) գյուղատնտեսական ուղղվածություն չունեն, թեև առանձին ՄԿԾ-ներում ներառվել է գյուղատնտեսական ոլորտի մեկ կամ երկու դասընթաց: ՄԿԾ-ների և առաքելության մասամբ անհամապատասխանությունը վտանգի տակ է դնում առաքելության իրականացումը: Բուհը պետք է որոշի, թե ինչպիսի որակավորում ունեցող մասնագետներ է ցանկանում պատրաստել, համապատասխանաբար կհստակեցվի նաև բուհի պրոֆիլը: Փորձագիտական խումբը գնահատում է, որ բուհը ցանկանում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստել, այնուամենայնիվ աշխատաշուկայի ուսումնասիրությանը և արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը միտված գործընթացների բացակայությունը վտանգի տակ է դնում առաքելությամբ սահմանված թիրախի իրականացումը: Չնայած բուհը փորձում է բացահայտել և քննարկել ներքին շահակիցների կարիքները, արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմները՝ լինի դա աշխատաշուկա, թե շրջանավարտներ, բարելավման կարիք ունեն: Առաքելության և նպատակների արդյունավետության գնահատման համընդհանուր մոտեցման և հստակ մեխանիզմների բացակայությունը վտանգի տակ է դնում բուհի գործունեության թափանցիկությունը: Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում ռազմավարական նպատակների ձեռքբերումների գնահատման ցուցիչների մշակումը և ներդրումը ռազմավարական ծրագրում: Այս կերպ պլանը կլինի առավել հստակ և արդյունավետ, իսկ նպատակների իրականացմանը միտված հաջորդող քայլերը՝հնարավոր և տեսանելի ԵԳՀ հանրության համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին, սակայն առկա են որոշակի նկատառումներ: Ընդհանուր առմամբ, ԵԳՀ-ն առաքելությունը ընդհանրական է և ունի որոշակի հստակեցման անհրաժեշտություն՝արդյունքների մակարդակով: Փորձագիտական խումբը նկատեց ներքին շահակիցների ներգրավման բավարար փաստեր, սակայն արտաքին շահակիցներրի ներգրավվածությունը, կարծես, սահմանափակ է: Բուհի առաքելության և նպատակների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը վտանգի տակ է դնում բուհի գործունեության թափանցիկությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 1-ը գնահատում է բավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. հստակեցնել համալսարանի առաքելությունը՝ վերջնարդյունքների մակարդակում ավելի հստակ դարձնելով և ծավալած գործունեությունը համապատասխանեցնելով առաքելությանը (կամ վերանվանել համալսարանը),
2. ներդնել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և ուսումնասիրման հստակ մեխանիզմներ,

3. ռազմավարական պլանում ներառել ռազմավարական նպատակների ձեռքբերման գնահատման ցուցիչներ,
4. ներդնել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ

Համալսարանում առկա են կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզ և այդ մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթեր: Ըստ համալսարանի 2013 թվականին ընդունված նոր կանոնակարգի, ԵԳՀ կառավարման մարմիններն են ԵԳՀ ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը և ռեկտորը: Համահամալսարանական կառավարումը հիմնված է ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման զուգակցման սկզբունքների վրա: Կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգվում և լիազորությունները բաշխվում են կանոնադրությամբ և գիտական խորհրդի կողմից ընդունված համապատասխան կանոնակարգերով: Չնայած համալսարանի կառավարման համակարգը հաճախ փոփոխվում է՝ նոր ստորաբաժանումներ և կառույցներ են ստեղծվում, այնուամենայնիվ կառավարման համակարգի և առաքելության ու ռազմավարական նպատակների միջև փոխկապակցվածությունը չկա: Համալսարանում առկա են սահմանված էթիկայի նորմեր: Որոշումների կայացման գործընթացում, որպես կանոն, բացակայում են ֆորմալ ընթացակարգերը, առավել կիրառական է ռեկտորի մակարդակով խնդիրների լուծման պրակտիկան: Գոյատևելով միայն ուսանողների վարձավճարների հաշվին՝ բուհը որոշակի դժվարություններ ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու խնդրում: Մարդկային ռեսուրսների առումով պատկերը հետևյալն է. վարչական ապարատում տարածված է միևնույն անձի կողմից մի քանի պաշտոնների միաժամանակյա վարում, ուսումնաօժանդակ անձնակազմը բացակայում է:

2.2. ՄՈՒՀ_ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը

Ուսանողներն ու դասախոսներն ազատ են արտահայտելու իրենց կարծիքը և ներգրավված են կառավարման գրեթե բոլոր մարմիններում, բացառությամբ ընդհանուր ժողովի: Դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն անմիջական մասնակցություն ունենալու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Ի լրումն համալսարանում գործող ֆորմալ մեխանիզմներից, բավականին արդյունավետորեն գործում են ոչ ֆորմալ

մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս անմիջականորեն համալսարանի ղեկավարությանը ներկայացնել ՊԴԱ կազմին և ուսանողությանը հուզող հարցերը և ստանալ արագ արձագանք:

2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ , միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ

Պլանավորումը ԵԳՀ-ում իրականացվում է երկու մակարդակում՝ ռազմավարական պլանավորում և ընթացիկ գործընթացների պլանավորում: Առաքելությունից բխող նպատակների իրականացման համար համալսարանի կողմից մշակվել են գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք հաստատվել են 2007 թ.-ին համալսարանի ռեկտորի կողմից: Այնուամենայնիվ, վերջիններիս իրականացման արդյունքները գնահատված չեն: Այժմ բուհի առաքելությանը ու նպատակներին համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ չկան:

2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է ոչ համակարգված կերպով՝ ըստ անհրաժեշտության: ԵԳՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար ներկայումս հիմնականում կիրառվող մեխանիզմը հանդիսանում են հարցումները, որոնք պարբերական բնույթ չեն կրում և հուսալիության տեսանկյունից բարելավման կարիք ունեն: Քիչ են տվյալների հավաքագրման հուսալիության և դրանց հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ վերլուծությունները: Նմանատիպ ուսումնասիրության օրինակ կարելի է համարել ինքնավերլուծության նպատակով կազմակերպված հարցումները և դրանց արդյունքների վերլուծությունը:

2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում)

ԵԳՀ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման մեխանիզմները դեռևս համակարգված չեն: Որակի կառավարման՝ ՊԻՍԲ սկզբունքով իրականացվող վարչարարությունը գտնվում է հիմնականում պլանավորման փուլում, բացակայում է հաջորդող քայլերի համակարգված իրականացումը, գնահատումն ու բարելավումը: ՊԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ:

2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ

ԵԳՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով մեխանիզմներ դեռևս չեն մշակվել: Չկա նաև մշակման փուլում գտնվող այդ մեխանիզմներին վերաբերող փաստաթուղթ: Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով ամբիոնները և ֆակուլտետները նպատակային գործառույթ չեն իրականացնում:

2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ

ԵԳՀ-ն չի իրականացնում ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին քանակական և որակական տեղեկատվության վերաբերյալ հրապարակումների գնահատում: Բացակայում են ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվությունը գնահատող մեխանիզմները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում կառավարման մարմինների աստիճանակարգի առկայությունը, այնուամենայնիվ, այն փոքր-ինչ դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ որոշումների կայացման գործընթացը ֆորմալ կերպով չի կանոնակարգվում: Բոլոր տեսակի պլանավորումների իրականացման և մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեքությունը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը: Փորձագիտական խումբը ողջունում է, որ համալսարանն ուսանողներին ու դասախոսներին ներգրավում է կառավարման գրեթե բոլոր մարմիններում և հնարավորություն ընձեռում ազատ արտահայտել իրենց կարծիքը, մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը: ԵԳՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար ներկայումս հիմնական կիրառվող մեխանիզմը սոց. հարցումներն են, որոնց անցկացման նպատակները, պարբերականությունը, մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցվածների ընդգրկման շրջանակը թույլ չեն տալիս հարցումները համարել որպես ներքին շահակիցների կարծիքների վերհանման արդյունավետ գործիք: Կառավարման համակարգի ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով, քանի որ մշակված չեն համապատասխան ընթացակարգեր: ՊԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ, սակայն համալսարանի ղեկավարության կողմից որակի կառավարման սկզբունքի կարևորումը հուսադրում է, որ չեն ուշանա համապատասխան քայլերը այդ սկզբունքի ներդրման ուղղությամբ: Բուհում ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց հիման վրա կայացված որոշումների օրինակների սակավությունը, ինչպես նաև հստակ մեխանիզմների բացակայությունը հարցականի տակ է դնում կառավարման արդյունավետությունը, քանի որ առանց հիշյալ տեղեկատվության անհնար է գնահատել համալսարանի կրթական գործունեությունը, ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռքբերումը, դասավանդման մեթոդների արդյունավետությունը, կառավարչական որոշումների հիմնավորվածությունը: ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների բացակայությունը վկայում է համալսարանում որակի վերահսկման գործընթացի անկատարության մասին, քանի որ խնդիր չի դրվում գնահատելու գործընթացի արդյունավետությունը: Մինչդեռ համալսարանն ինքը պետք է շահագրգռված լինի դրանում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին՝ հաշվի առնելով այն փաստը, որ որոշումների կայացման գործընթացը ֆորմալ կերպով չի կանոնակարգվում, կառավարման համակարգի ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման ՊԻՍԲ սկզբունքով, համալսարանի կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման հիմնական կիրառվող մեխանիզմը

սոց. հարցումներն են, որոնք պարբերական բնույթ չեն կրում, իսկ նպատակայությունը գնահատված չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 2-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. պարզեցնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը. ընտրել ճկուն կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կոլեգիալ ակադեմիական մշակույթի վրա, կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը,
2. կառավարման համակարգն այնպես հարմարացնել, որպեսզի դասախոսական կազմի ներդրումը կրթական քաղաքականությունների մշակման, կիրառման և վերանայման գործընթացներում լինի ավելի մեծ,
3. մշակել պաշտոնի անձնագրեր վարչական անձնակազմի համար՝ հստակ տարանջատելով լիազորությունները, նկարագրելով հիմնական պարտականությունները, ինչպես նաև պաշտոնին ներկայացվող հստակ պահանջները,
4. որոշումների կայացման գործընթացը ֆորմալ կերպով կանոնակարգել,
5. մշակել և ներդնել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ,
6. ներդնել համալսարանի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման հստակ մեխանիզմներ,
7. կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԻՍԲ շրջափուլը՝ ռազմավարական պլանի նպատակներին արդյունավետորեն հասնելու նպատակով,
8. մշակել և ներդնել մասնագիտությունների և կրթական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և գնահատման հստակ մեխանիզմներ,
9. գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությանը ներգրավել արտաքին փորձագետներին, ինչը թույլ կտա ստանալու համալսարանի գործունեության ուժեղ և թույլ կողմերի առավել հստակ և ամբողջական պատկեր:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1. **ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների**

ՀՀ ԿԳՆ-ի կողմից ԵԳՀ-ին տրված լիցենզիայի (17.01.2013) համաձայն՝ բուհն իրավունք ունի բակալավրի կրթական ծրագրով իրականացնել 1. հացի, հրուշակեղենի և մակարոնի

արտադրանքի տեխնոլոգիա, 2. անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, 3. իրավագիտություն, 4. ֆինանսներ, 5. դիզայն մասնագիտություններով կրթություն, որոնցից առաջին չորսով նաև՝ մագիստրոսական կրթություն: Համալսարանը ներկայումս առաջնորդվում է ԿԳՆ-ի կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչներով, որոնք մշակվել են հայաստանյան այլ բուհերի կողմից, և գրեթե առանց տեղայնացման, առանց հաշվի առնելու ԵԳՀ առաքելությունն ու կրթական բովանդակության առանձնահատկությունները ներդրվել համալսարանում: ՄԿԾ-ները մասամբ են համահունչ համալսարանի առաքելությանը, քանի որ ըստ առաքելության նախատեսվում է պատրաստել մասնագետներ գյուղատնտեսության ոլորտի համար, իսկ բուհում շնորհվող 3 մասնագիտությունների (ֆինանսներ, իրավագիտություն, դիզայն) կրթական ծրագրերը չունեն գյուղատնտեսական ուղղվածություն (գյուղատնտեսական ոլորտին առնչվող մեկական դասընթացների ավելացումը անբավարար է այս ոլորտում մասնագետներ պատրաստելու տեսակետից): Համալսարանում ՄԿԾ-ների, մասնավորապես, ուսումնական պլանների մշակման և իրականացման համընդհանուր մոտեցում չկա: Երկաստիճան կրթական համակարգին և ուսուցման կրեդիտային համակարգին անցում կատարելուց հետո ՄԿԾ-ներում էական բովանդակային փոփոխություններ չեն կատարվել: Բուհում մշակվել են առարկայական ծրագրերի մշակման ուղեցույց:

3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը

Չնայած բոլոր ՄԿԾ-ներում նկարագրված են ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները, այնուամենայնիվ՝ դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցված չեն ուսումնառության վերջնարդյունքներին: Համալսարանում կիրառվում են դասավանդման (դասախոսություն, գործնական, լաբորատոր, պրակտիկա, սեմինար) և ուսումնառության (գրականության վերլուծություն, ռեֆերատ, խմբային աշխատանք, սեփական դիտարկումներ և այլն) տարբեր մեթոդներ: Մեթոդների ընտրության հարցում չկա հստակ մոտեցում: Ինչպես նշված է ինքնավերլուծության զեկույցում՝ բուհը չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, իսկ ակնկալվող ուսումնառության արդյունքներին հասնելու համար հիմնականում կիրառվում են դասավանդման և ուսումնառության դասական՝ դասախոսակենտրոն մեթոդները, որոնք այնքան էլ չեն նպաստում ուսանողակենտրոն կրթության իրականացմանը: Այնուամենայնիվ, Համալսարանը գիտակցում է ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրության քաղաքականության և ընթացակարգերի կարևորությունը և նախատեսում է մշակել և ներդնել: Բուհում չկան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունն ու կիրառելիության արդյունավետությունը գնահատող հստակ մեխանիզմներ:

3.3. ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը

ԵԳՀ-ում ներդրվել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կրեդիտային համակարգ: Ուսանողների գիտելիքների վերահսկման և գնահատման համար համալսարանում օգտագործվում է վարկանիշային գնահատականների 100 միավորանոց համակարգ, դրան համապատասխան տառային գնահատականներ, և գնահատականների պաշտոնական թվային համարժեք: Չնայած բոլոր ՄԿԾ-ների մակարդակով նկարագրված են ուսումնառության վերջնարդյունքները, այնուամենայնիվ հստակ չի երևում վերջինիս կապը գնահատման համակարգի հետ և թե որքանով են դասավանդման և ուսումնառության մեթոդները արդյունավետ ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից: Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով ԵԳՀ-ն 2013 թ-ին մշակել է գրագողության դեմ պայքարի քաղաքականություն, ըստ որի՝ նախատեսվում է կանոնակարգող և մեթոդական փաստաթղթերի մշակում: Այնուամենայնիվ, վերջինիս

արդյունավետությունը գնահատված չէ: Համալսարանում միջանկյալ քննություններն անցկացվում են հիմնականում գրավոր, իսկ ամփոփիչ քննությունները՝ բանավոր եղանակով: Ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով ոչ մի ուսանող չի հեռացվել համալսարանից:

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը

Համալսարանում կրթությունն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներով, որոնք կազմվել են այլ համալսարանների (օրինակ՝ ՀԱԱՀ, ՀՊՏՀ) և հաստատվել ԿԳՆ-ի կողմից: ՄԿԾ-ների ներքին և արտաքին բենչմարքինգի օրինակներ և իրականացման հստակ քաղաքականությունը համալսարանում չկան: Չնայած ուսումնական պլաններով նախատեսված են կամընտրական դասընթացներ, հանդիպումներին մասնակցած ուսանողները մինչ այդ ոչ մի առարկա չէին ընտրել: Ներկայումս, բուհում բացակայում են այլ ուսումնական հաստատությունների հետ դասախոսների և ուսանողների փոխանակումն ու շարժունությունը կարգավորող համաձայնագրերը: Համալսարանում չկան ուսանողների և դասախոսների շարժունությունը երաշխավորող քաղաքականություն և ընթացակարգեր: Ինքնավերլուծության զեկույցի և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մինչև այժմ բուհի դասախոսական անձնակազմի և ուսանողների արտերկրյա շարժունության դեպքեր չեն եղել: Շարժունությանը խոչընդոտում է նաև օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:

3.5. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն

Համալսարանը կարևորում է ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի վերանայումը, այնուամենայնիվ, ԵԳՀ-ն ՄԿԾ-ների բարելավման հետ կապված գործընթացներ չի իրականացրել և բուհում չկա ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն, բացառությամբ դասալսումների:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը գնահատում է, որ ԵԳՀ-ն իրականացրել է մի շարք փոփոխություններ միտված կրթության որակի բարելավմանը՝ մասնավորապես կրթության երկաստիճան ուսուցման համակարգի ներդրումը: Այնուամենայնիվ, գործող ծրագրերի անհամապատասխանությունն առաքելությանը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության անհրաժեշտ միջոցներով և մեթոդներով ապահովված չլինելը վտանգի տակ է դնում ԵԳՀ կրթական ծառայությունների մատուցման որակը: Բուհը դեռ շատ անելիքներ ունի ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքների սահմանման հարցում: Վերջիններիս ընդհանրական նկարագրված լինելը և մանրամասն քարտեզագրում չպարունակելը, դժվարեցնում է առավել համակարգված աշխատանքը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության բացակայությունը խոչընդոտում է ուսանողակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը, իսկ մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականության բացակայությունը՝ ՄԿԾ-ների հետագա զարգացմանը:

Չնայած ԵԳՀ դասախոսների և ուսանողների մեծ մասը գոհ է գնահատման ներկա համակարգից, այնուամենայնիվ, ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման բացակայությունը և գրագողության դեմ պայքարի մեխանիզմների ոչ հստակությունը չեն կարող երաշխավորել գնահատման օբյեկտիվությունը և նպաստել ազնիվ ակադեմիական միջավայրի ձևավորմանը: Կարևոր է նշել, որ վերջնական քննությունների

միայն բանավոր կազմակերպումը ռիսկային է դարձնում գնահատման համակարգի չափանիշների թափանցիկությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունն էապես նվազեցնում է դրանց կիրառման նպատակայնությունը, իսկ ուսուցման գործընթացը դարձնում խոցելի և ոչ համահունչ արդի պահանջներին (ազգային և միջազգային բենչմարքերին):

Հաշվի առնելով այն փաստը, որ ՄԿԾ-ները մասամբ են համապատասխանում համալսարանի առաքելությանը, ՄԿԾ-ներում նկարագրված ուսումնառության արդյունքները և ուսանողների գիտելիքի գնահատման համակարգը համահունչ չեն, ինչպես նաև գնահատման համակարգը հնարավորություն չի տալիս գնահատել ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը, փորձագիտական խումբը չափանիշը գնահատում է բացասական: Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցումը, սակայն անցումը դրան դեռևս ավարտուն չէ: Համալսարանում դասախոսների և ուսանողների շարժունությունը խթանող մեխանիզմներ չկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 3-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. վերանայել ՄԿԾ-ները (հստակ սահմանել ուսումնառության արդյունքները)՝ համապատասխանեցնելով վերջիններս բուհի առաքելությանը և հաշվի առնելով շահակիցների կարիքները,
2. ներդնել ուսումնառության ու դասավանդման մեթոդների ընտրության և գնահատման քաղաքականություն,
3. բարելավել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգն այնպես, որ վերջինս արտացոլի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը,
4. առավել կիրառական ուղղվածություն ունեցող առարկաների դասավանդման ընթացքում ներդնել դասավանդման ինտերակտիվ, ուսանողակենտրոն մեթոդներ,
5. բարելավել գրագողության դեմ պայքարի մեխանիզմները տեխնիկական (հնարավորության դեպքում համապատասխան համակարգչային ծրագրերի օգտագործում) և կրթական (ակադեմիական ազնվության շրջանակներում գրագողության բացառում) մակարդակներում,
6. իրականացնել նպատակային բենչմարքինգ այլ ուսումնական հաստատությունների նմանատիպ ծրագրերի հետ ազգային և միջազգային մակարդակներում,
7. մշակել և կիրառել մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ

ԵԳՀ-ում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման առումով գործում է ուսանողների ընդունելության կանոնակարգը: Համալսարանում առկա

ուսանողների ընտրությունն և ընդունելությունն իրականացվում է միասնական քննությունների հիման վրա, իսկ հեռակա բաժնի ընդունելությունը՝ հարցազրույցով: Ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է բուհի ընդունող հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորը, ռեկտորի կողմից նշանակվող պատասխանատու քարտուղարն ու անդամները: Հատկանշական է, որ հեռակա ուսանողների թվաքանակն էականորեն գերազանցում է առկա համակարգում սովորողների թվաքանակին: Բուհի ուսանողների ընտրության և ընդունելության քաղաքականությունը թիրախային չէ: Մասնագիտական կողմնորոշման և բուհի կրթական հնարավորությունների մասին իրազեկման աշխատանքները իրականացվում են առանց հաստատված քաղաքականության և ոչ համակարգված կերպով:

4.2. ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր

Համալսարանում չկա ուսանողների կարիքների բացահայտման հստակ և կանոնակարգված մեխանիզմ: Ուսանողների կարիքների վերհանումն իրականացվում է ոչ ֆորմալ կերպով՝ ուսանողների և ուսանողական խորհրդի կողմից բարձրացվող հարցերը քննարկվում են համալսարանի ղեկավարության հետ: Ինքնավերլուծության զեկույցի պատրաստման շրջանակներում բուհն իրականացրել է սոցիոլոգիական հարցում, որի արդյունքում փորձել են վերհանել ուսանողների կարիքները:

4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար

Համալսարանում բացակայում է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների անցկացման ժամանակացույց, սակայն այն նախատեսվում է 2013-2018 ուսումնական տարիների ԵԳՀ ռազմավարական ծրագրով: Լրացուցիչ պարապմունքներ ԵԳՀ-ում ներկայումս չեն իրականացվում, չնայած հատկապես օտար լեզվի մասով դրա անհրաժեշտությունը նշվեց ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների կողմից: Խորհրդատվությունները հիմնականում կազմակերպվում են ավարտական և անհատական աշխատանքների կատարման ընթացքում: Համալսարանը նախատեսում է ուսումնառության գործընթացում ներառել ուսանողների անհատական և ինքնուրույն աշխատանքներ: Որպես խորհրդատուներ հանդես են գալիս դասախոսները, ամբիոնի վարիչները, ուսանողական խորհրդի անդամները, համալսարանի վարչական անձնակազմը, դեկանները: Խորհրդատվություն կամ աջակցություն ստանալու նպատակով ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել համապատասխան մարմիններին: Փորձագիտական խմբի և ուսանողների հանդիպման ժամանակ պարզվեց, որ համալսարանում չի գործում կուրատորական կամ մենթորական դպրոց:

4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով

Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց չկա: Չկա նաև ավարտական կամ անհատական աշխատանքներ կատարելու մեթոդաբանություն: Ուսանողների ուղղորդումը կամ օժանդակությունն իրականացվում է ոչ համակարգված կերպով: Սակայն ուսանողները գոհ են, որ օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով նրանք պարզապես կարող են դիմել վերադաս մարմիններին, և հարցին ընթացք է տրվում: Ինքնավերլուծության զեկույցում ներկայացված սոց. հարցման տվյալների համաձայն՝ ուսանողների մեծ մասը բավարարված է տրամադրվող օժանդակությունից:

4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ

2013 թ.-ին համալսարանում ստեղծվել է կարիերայի կենտրոն, որի գործունեությունը կարգավորող փաստաթղթերը դեռևս գտնվում են մշակման փուլում: Ընդունվել է Կարիերայի

կենտրոնի կանոնակարգը: 2013-2018 թ.-ի ռազմավարական ծրագրում ամրագրված են կենտրոնին առնչվող խնդիրները: Այնուամենայնիվ, Կարիերայի կենտրոնի նորաստեղծ լինելու պատճառով, ուսանողների մեծ մասը կամ տեղյակ չէ կենտրոնի մասին, կամ էլ դեռ չի օգտվում նրա ծառայություններից: Կարիերայի կենտրոնը ուսանողներին ուղղորդման և օժանդակման հարցում դեռևս մեծ դերակատարում չունի: Կենտրոնը չի իրականացնում ուսանողներին տեղեկատվության տրամադրման, արտաքին շահակիցների ներգրավման, աշխատաշուկայի ուսումնասիրման աշխատանքներ: Ուսանողների և շրջանավարտների տվյալների բազան դեռևս ձևավորման փուլում է: Կարիերայի կենտրոնը դեռ ինտեգրված չէ համալսարանական կյանքին: Ուսանողների կարիերային նպաստող այլ ծառայություններ ԵԳՀ-ում չկան:

4.6. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում

Համալսարանում ուսանողների կողմից չի իրականացվում որևէ գիտահետազոտական աշխատանք, չնայած այն հանգամանքին, որ համալսարանի կողմից թողարկվող մասնագիտությունների ցանկում կան կիրառական, գյուղատնտեսական ուղղվածության մասնագիտություններ և բուհում գործում է մագիստրատուրա: Համալսարանը չունի հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը խթանող հստակ քաղաքականություն: Որոշ մասնագիտությունների ուսանողները կատարում են կուրսային և դիպլոմային աշխատանքներ, սակայն դրանք հետազոտական, նորարարական բաղադրիչ չեն պարունակում և հիմնականում ունեն ռեֆերատիվ բնույթ:

4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին

ԵԳՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին է հանդիսանում ուսանողական խորհուրդը, որը գործում է իր կանոնադրությանը համապատասխան և նախատեսված է ուսանողների շահերի պաշտպանության, նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր արժեքների զարգացման համար: ԵԳՀ-ի 2013-2018թ.-ի ռազմավարական ծրագրի խնդիրներից մեկում պլանավորվում է ընդլայնել ուսանողական խորհրդի գործունեությունը՝ միտված ուսանողների իրավունքների պաշտպանությանը: Փորձագիտական խմբի դիտարկումներից պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի գործունեությունն ավելի շատ միտված է միջոցառումների կազմակերպմանը, քան կրթական գործընթացի կարիքների վերհանմանը և ուսանողների իրավունքների պաշտպանությանը: Ուսանողներն իրենց իրավունքների մասին տեղեկացվում են բանավոր: Հանդիպումների ժամանակ ուսանողները նշեցին, որ բարձրացվող հարցերն անմիջապես քննարկվում են ղեկավարության կողմից:

4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ բուհում ներկայումս առկա չեն, սակայն համաձայն նոր մշակված ռազմավարական ծրագրի նախատեսվում է մշակել և ներդնել: Ուսանողների կարիքների վերհանման հիմնական գործիքը սոցիոլոգիական հարցումն է, որն անցկացվել է ինքնավերլուծության շրջանակներում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵԳՀ ուսանողները համալսարանից ստանում են որոշակի աջակցություն: Սակայն կրթական միջավայրն արդյունավետ դարձնելուն խոչընդոտում են համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը, որոնք թույլ կտային վերահսկել

գործընթացները և գնահատել դրանց արդյունքները: Ուսանողների հավաքագրման արդարության և թափանցիկության ապահովման տեսանկյունից՝ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ համալսարան միասնական քննական համակարգով ընդունված ուսանողները շատ քիչ են, իսկ առկա ուսուցմամբ սովորողները հարցազրույցով ընդունվել են հեռակա, այնուհետև տեղափոխվել առկա համակարգ: Մտահոգիչ են նաև ինքնավերլուծության զեկույցում նշված հարցման արդյունքները, ըստ որի՝ բուհի հարցված ուսանողների 48.75%-ը գտնում է, որ համալսարանում ընդունելությունը թափանցիկ չէ: Այդուհանդերձ, համալսարանը հստակ քայլեր չի ձեռնարկում այդ ուղղությամբ և պարզ չէ, թե նշված վերլուծության արդյունքները ինչ ազդեցություն են ունեցել բուհի որդեգրած քաղաքականության բարելավման վրա: Համալսարանն այս առումով բավական անելիքներ ունի, լուրջ քայլեր պետք է ձեռնարկի ընդունելության քաղաքականությունը հստակեցնելու ուղղությամբ՝ մասնավորապես առավել թափանցիկ, ազնիվ, վավեր և հուսալի դարձնելու առումով:
Կրթական միջավայրի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով են բավարարվում ուսանողների տարատեսակ կարիքները, մինչդեռ համալսարանը հազվադեպ է դրանք ուսումնասիրում: Բուհում ուսանողների կրթական կարիքների վերհանման ու կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ հստակ մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է համալսարանի գործունեության գնահատման հնարավորությունը: Իսկ ինքնավերլուծության շրջանակներում անցկացված միակ սոցիոլոգիական հարցումը կամ ուսանողական խորհրդի կողմից ոչ ֆորմալ կերպով բարձրացվող հարցերը չեն կարող բավարար չափով վերհանել ուսանողների կարիքները, հատկապես եթե ուսանողական խորհուրդը բավականին ինտեգրված չէ ուսանողական կյանքում, իսկ հարցումների նպատակայնությունը ուսումնասիրված չէ:

Չնայած բուհում չկա ուսանողների լրացուցիչ պարապմունքների կազմակերպման, խորհրդատվություն տրամադրելու հստակ համակարգ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը դրական է գնահատում ոչ ֆորմալ կերպով իրականացող ուսանող-դասախոս, շփումները: Միևնույն ժամանակ, կուրատորական կամ մենթորական դպրոցի բացակայությունը նվազեցնում է ուսանողների արդյունավետ ուսումնառությանը:

Ուսանողների ուղղորդումը կամ օժանդակությունն իրականացվում է ոչ համակարգված կերպով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ուսանողները օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով կարող են դիմել անմիջապես վարչական անձնակազմին, և համապատասխան արձագանք ստանալ:

Կարիերայի կենտրոնի ստեղծումը կարևոր քայլ է՝ ուսանողներին աշխատաշուկա մուտք գործելուն նախապատրաստելու տեսանկյունից: Այն նաև լավ հնարավորություն է ընձեռում բուհին գնահատել պրակտիկաների կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաև ուսումնասիրել՝ որքանով են վերջիններս նպաստում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը: Չնայած բուհում կենտրոնն արդեն մի քանի ամիս գործում է, այնուամենայնիվ որևէ հստակ գործընթաց ուսանողների օժանդակությանը միտված իրականացված չէ, որը մեծ խթան կարող էր հանդիսանալ ուսանողների հետագա աշխատանքային գործունեության խթանման ու ուղղորդման տեսանկյունից:
Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի պակասը սահմանափակում է ուսանողների մոտ քննադատական մտածելակերպի և հետազոտական կարողությունների ձևավորումը:
Գովելի է համալսարանում ուսանողական խորհրդի առկայությունը, որն ուսանողների պաշտպանությամբ զբաղվող հիմնական մարմինն է: Այնուամենայնիվ, վերջինիս գործունեությունը հիմնականում սահմանափակվում է միջոցառումների կազմակերպմամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուս.խորհուրդն ամբողջովին ինտեգրված չէ

ուսանողական կյանքում, որն էլ իր հերթին նվազեցնում է նրա գործունեության արդյունավետությունը և խոչընդոտում նպատակների իրագործմանը:
Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմների բացակայությունը, լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ ուսանող-բուհ փոխհարաբերության արդյունավետության տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 4-ի պահանջներին, քանի որ բուհի՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ուսանողներին տրամադրած աջակցությունը դեռևս բավականին բարելավման անհրաժեշտություն ունի: Փորձագիտական խումբն ուսանողների ընդունելության քաղաքականությունը, ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և տրամադրած օժանդակությունը թերի է համարում և անհրաժեշտություն է տեսնում հետագա հստակեցման և կանոնակարգման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 4-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. վերանայել ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման քաղաքականությունը՝ երաշխավորելու գործընթացի թափանցիկությունն ու ազնվությունը,
2. կանոնակարգել և ավելի համակարգված դարձնել ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը ,
3. մշակել ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ,
4. կանոնակարգել լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն տրամադրելու գործընթացը,
5. մշակել վարչական անձնակազմին դիմելու կանոնակարգ և ժամանակացույց,
6. հստակեցնել կարիերայի կենտրոնի գործառույթները և վերջինիս ինտեգրել կրթական գործընթացներում՝ակտիվացնելով կենտրոնի գործունեությունը, ընդլայնելով նրա գործունեության շրջանակը՝ այն նպատակաուղղելով շրջանավարտների զբաղվածության և շրջանավարտների հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը,
7. համալսարանում կազմակերպել ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու գործընթաց և այն նպատակաուղղել ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամը (վերջինիս կարող է նպաստել/խթանել ՈՒԳԸ-ի ստեղծումը),
8. բարձրացնել ուսանողական խորհրդի գործունեության արդյունավետությունը՝ մասնավորապես ուս.խորհուրդ - ուսանող փոխհարաբերությունների բարելավման տեսանկյունից,
9. մշակել և ներդնել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իիրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

1.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր

2013թ.-ին ԵԳՀ-ում մշակվել է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության և պահպանման կանոնակարգ: Համաձայն որի՝ բուհում գիտամանկավարժական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական, արտադրական տարակարգերում ընդգրկված աշխատողների աշխատանքային թափուր տեղերը կարող են համալրվել ինչպես մրցույթի միջոցով, այնպես էլ առանց մրցույթի՝ աշխատողի ուղղակի նշանակմամբ: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմի համալրումը հիմնականում իրականացվում է հարցազրույցով: Զանգվածային լրատվամիջոցներով թափուր տեղերի մասին հայտարարություններ չեն եղել: Գործող պրոֆեսորադասախոսական կազմն աշխատում է պայմանագրային հիմնական և արտաքին համատեղության հիմունքներով: ԵԳՀ-ում աշխատում է 47 դասախոս, որոնցից 30-ը՝ հիմնական, 17-ը՝ համատեղությամբ: Հիմնական դասախոսական կազմի 50%-ն ունի գիտական աստիճան, համատեղությամբ աշխատողների՝ 70%-ը: ԵԳՀ-ն չունի ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության արդյունավետությունը գնահատելու համապատասխան մեխանիզմներ փորձագիտական խումբը չտեսավ:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ

Ներկայումս ԵԳՀ-ն չունի մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ ձևակերպված պահանջներ: Որոշ դասախոսներ դասավանդում են առարկաներ, որոնք չեն համապատասխանում իրենց մասնագիտական որակներին: Բուհում աշխատում են թողարկվող մասնագիտությունների գծով համապատասխան որակավորումներ ունեցող սակավաթիվ մասնագետներ. հաճախ միևնույն դասախոսը վարում է մի քանի դասընթաց (3-9), որը միանշանակորեն ազդում է դասավանդման որակի վրա: Առկա են դասախոսի պաշտոնի անձնագրեր, որտեղ ներկայացված են աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը, պաշտոնեական գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, այդուհանդերձ դրանք չեն արտահայտում կրթական ծրագրերի պահանջները: Բացակայում են ուսումնական գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավումը խթանող մեխանիզմները և սկսնակ դասախոսների վերապատրաստման համակարգը:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար

ԵԳՀ դասախոսական կազմի գնահատումն իրականացվում է դասալսումների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումների միջոցով, սակայն վերջիններս պարբերական բնույթ չեն կրում: Հարկ է նշել, որ ուսանողների շրջանում իրականացվող հարցման գործիքը 2012թ.-ից մինչ օրս վերանայված չէ, հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները պարբերաբար չեն կատարելագործվում: Հարցումների իրականացման արդյունավետությունը ևս ուսումնասիրված չէ:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ,

Մինչև 2013թ.-ը համալսարանում չի եղել դասախոսական աշխատակազմի կատարելագործմամբ զբաղվող որևէ կառույց: 2013թ.-ին որակի ապահովման և ներքին

աուդիտի կենտրոնի ներքո ստեղծվել է որակավորման բարձրացման և վերապատրաստման ենթաբաժին: Բաժնի կողմից կազմակերպվել են անգլերեն լեզվի և համակարգչային կարողությունների զարգացմանը միտված դասընթացներ, որոնց մասնակցել են սակավաթիվ դասախոսներ, իսկ դասընթացների արդյունավետությունն ուսումնասիրված չէ: Օտար լեզվի բարելավման խնդիրը դեռևս առկա է: Կենտրոնի կողմից դեռևս չեն իրականացվել մասնագիտական վերապատրաստումներ և մասնագիտական կարողությունների զարգացմանն ու արդիականացմանն ուղղված դասընթացներ: Հիմնականում դասախոսական կազմը մասնակցում է այլ բուհերի կամ հաստատությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին: Բուհը չի իրականացրել կարիքների վերհանում. դրա հետ առնչվող միակ գործընթացը եղել են ինքնավերլուծության նպատակով կազմակերպված հարցումները: ԵԳՀ-ն պլանավորում է 2014-2015 ուս. տարում կազմակերպել դասավանդման ինտերակտիվ մեթոդների ներդրմանը միտված դասախոսական կազմի վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ վերապատրաստումներով զբաղվող ենթաբաժնի գործունեությունը գտնվում է դեռևս պլանավորման փուլում: Դասախոսների մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանը միտված բուհի քաղաքականությունը գտնվում է մշակման փուլում:

5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը

Ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով համալսարանը չի կարող ներգրավել անհրաժեշտ թվով բարձր որակավորում ունեցող դասախոսներ: ԵԳՀ-ում գիտահետազոտական աշխատանքների բացակայության պատճառով, դասախոսական կազմը հիմնականում ներգրավված չի եղել ԵԳՀ շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում, հետևաբար բացակայում է գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը: ՄՈՒՀ-ում դեռևս չկա դասախոսների շարժունությանը և միջազգայնացմանը միտված գործընթացներ: ԵԳՀ-ն վերջերս հրատարակել է դասախոսական կազմի կողմից ներկայացված գիտական հոդվածների ժողովածու:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր

Ներկայումս ԵԳՀ-ում չկան դասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր: Որակի ապահովման և աուդիտի կենտրոնի ուսումնասիրությունների հիման վրա նախատեսվում է ձևավորել հստակ քաղաքականություն: Ներկայումս բուհում գործում են դասախոսների խրախուսման որոշ մեխանիզմներ՝ հավելավճարներ, շնորհակալագրեր, պատվոգրեր:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար

Համալսարանի վարչական անձնակազմն ընդգրկում է 18 աշխատակից, ում պարտականություններն ու պատասխանատվությունները սահմանված են աշխատանքային պայմանագրում: ԵԳՀ-ն չունի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ կազմ: Հստակ չէ՝ ինչ պահանջներ են ներկայացվում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակավորումներին, ատեստավորմանը, նրանց մասնագիտական գիտելիքների գնահատմանը, գործունեության արդյունավետության գնահատմանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը գտնում է, որ պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականությունը և ընթացակարգերը թերի են: Կանոնակարգն ընդհանրական է, իսկ համալրման տարակարգումները, ինչպես նաև մասնագիտական որակներին ներկայացվող

ցուցիչները հստակեցված չեն: Պարզ չէ՝ որքանով է ՊԴԱ կազմը նպաստում առաքելության իրականացմանը: Բուհ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականության բացակայությունը վտանգի տակ է դնում գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող հաստատության գործունեությունը:

Այն փաստը, որ դասախոսների գերակշիռ մասը, այդ թվում և սկսնակ դասախոսները, դասավանդում են 3-9 դասընթացներ, փորձագիտական խմբին թույլ է տալիս եզրակացնել, որ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները, դասավանդողների արհեստավարժությունը և մասնագիտական ուղղվածությունն անտեսված են: Նշված հանգամանքն ուսումնական գործընթացը դարձնում է խոցելի և էապես խոչընդոտում գյուղատնտեսական ոլորտում որակյալ մասնագետների պատրաստմանը: Առավել մտահոգիչ էր, որ որոշ առարկաներ դասավանդում էին դասախոսներ, ովքեր չունեն համապատասխանում մասնագիտական որակներ և կրթություն: Այս տեսանկյունից կրթական գործընթացքի արդյունավետությունը լուրջ մտահոգությունների առիթ է տալիս:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհում գործում են դասախոսների գնահատման որոշ մեխանիզմներ, այնուամենայնիվ հստակ ամրագրված քաղաքականություն և ընթացակարգեր չկան, իսկ գործիքները բավարար չեն՝հավաստելու ցանկալի նպատակի ձեռքբերումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների արդյունքներն ավելի արդյունավետ կարելի է օգտագործել՝անհատական մակարդակում դասախոսական կազմի մասնագիտական հմտությունները, դասավանդման որակը բարելավելու նպատակով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ մինչ օրս իրականացրած վերապատրաստումները, կրեդիտային համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումները քիչ են մասնագիտական կատարելագործման գործընթացը բավարար համարելու համար: Այն փաստը, որ բուհը չի իրականացրել դասախոսների մասնագիտական կարիքների վերհանում, համապատասխանաբար չի իրականացրել մասնագիտական վերապատրաստումներ, խոչընդոտում է կադրային ներուժի շարունակական զարգացմանը և դասախոսական կազմի շարժունությանը: Դասախոսական կազմի շարժունությանը խոչընդոտող հանգամանք է նաև օտար լեզվի թերի իմացությունը:

Թեև ԵԳՀ-ն նշում է պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականության առկայությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով մեկ դասախոսի բեռնվածությունը (ըստ դասավանդվող դասընթացների) և վերջիններիս վերապատրաստման, վերարտակավորման սակավաթվությունը՝փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չի կարող ապահովել ՊԴԱ կազմով ապահովվածության կայունություն, որն էլ իր հերթին վտանգում է բուհի մատուցած կրթական ծառայությունների որակը:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ ԵԳՀ-ն նախատեսում է մշակել ընթացակարգեր միտված դասավանդողների մասնագիտական զարգացմանը և առաջընթացին, այդուհանդերձ ՊԴԱ կազմի առաջընթացի միասնական քաղաքականության դեռևս բացակայությունը կարող է նպաստել դասախոսական կազմի արտահոսքին, առաջ բերել բուհում նրանց համալրման խնդիր, ինչպես նաև խոչընդոտել կադրային ներուժի զարգացմանը:

Հաշվի առնելով այն փաստը, որ բուհի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով ապահովվածությունը

անբավարար է, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 5-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 5-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. մշակել դասախոսների համալրման տարակարգումներին ներկայացվող հստակ ցուցիչներ,
2. սահմանել կրթական պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ,
3. բարելավել դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները,
4. ուսումնասիրել հարցումների արդյունավետությունը և կիրառել վերջիններիս արդյունքները՝ որակավորման բարձրացման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու նպատակով,
5. բարելավել սկսնակ դասախոսների վերապատրաստման համակարգը,
6. բարելավել դասախոսական կազմի օտար լեզվի իմացությունը,
7. իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստումներ կրթական այնպիսի կարևոր խնդիրների շուրջ, ինչպիսիք են՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման համակարգի համապատասխանեցումը, ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպումը, դասընթացի կրթական վերջնարդյունքների և գնահատման համակարգի փոխկապակցումը,
8. փոխկապակցել մասնագիտական զարգացման դասընթացները կրթական ծրագրերի որակավորումների հետ,
9. ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանը միտված քաղաքականություն և ընթացակարգեր,
10. մշակել մասնագիտական չափանիշներ և բարելավման մեխանիզմներ՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման համար:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈՒՀ-ը ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1. **ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն**

Ներկայումս համալսարանը չունի հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների զարգացման ռազմավարություն, բացի այդ փաստացի համալսարանում մինչ 2013 թվականը չի իրականացվել գիտահետազոտական որևէ աշխատանք: Համալսարանում հետազոտական գործունեության իրականացումը դիտարկվում է միայն մագիստրոսական կրթության իրականացման համատեքստում: Մինչդեռ համալսարանը պետք է կարևորի նաև բակալավրական կրթության մակարդակով հետազոտական գործունեության իրականացումը, ՊԴԱ կազմի կողմից համապատասխան հետազոտական գործունեության ծավալումը, գիտական գործունեության արդյունքների շաղկապումը

դասավանդվող դասընթացների հետ, ինչպես նաև ՊԴԱ ընտրության ժամանակ նրանց մասնագիտական և գիտական հավակնությունների և հետաքրքրությունների հաշվառումը: Բուհի 2013-18 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվում է գիտական կենտրոնների հիմնում գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման նպատակով, որոնք կնպաստեն գյուղատնտեսության ոլորտում հետազոտությունների կատարմանը:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները

Համալսարանը ներկայումս մշակում է հետազոտությունների մեթոդաբանությանը ներկայացվող պահանջներ, սակայն հետազոտությունների ոլորտում ռազմավարության բացակայության հետևանքով բացակայում են նաև հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը: Համալսարանի գործունեության ընթացքում գիտահետազոտական աշխատանքները երբևէ չեն դիտարկվել որպես առանցքային ուղղություն և գերակայություն, ինչն իր ազդեցությունն է ունեցել առկա իրավիճակի վրա: Համալսարանը մարդկային և ֆինանսական ռեսուրսներ չի ներդրել համապատասխան գործունեության խրախուսման նպատակով: Բացի այդ, համալսարանի բյուջեն հստակորեն չի արտացոլում գիտական հետազոտությունների խրախուսման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցները:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով

Բուհը ներկայումս չունի հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Ըստ ռազմավարական պլանի, դրանք նախատեսվում է ստեղծել մինչ 2018թ.-ը՝ միաժամանակ ստեղծելով բարենպաստ պայմաններ հետազոտական աշխատանքների համար, հետազոտությունների համար նախատեսելով հատուկ սահմանված բյուջե: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ համալսարանը ձեռնամուխ է եղել ՊԴԱ կազմի գիտական հոդվածների ժողովածուի տպագրությանը, ինչը համալսարանի առաջին փորձն է:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը

Համալսարանը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, այնուամենայնիվ, այդ ուղղությամբ դեռևս ոչինչ իրականացված չէ, բացակայում են միջազգայանացումը երաշխավորող համապատասխան մեխանիզմներն ու քայլերը: Հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով կնքված որևէ համաձայնագիր չկա: ՊԴԱ կազմի օտար լեզվի իմացության մակարդակը խոչընդոտում է հետազոտության միջազգայնացմանը: Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները՝ սարքավորումները, լաբորատորիաների հագեցվածությունը ևս հնարավորություն չեն տալիս միջազգային մակարդակով հետազոտությունների իրականացման համար:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ

ԵԳՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ առկա չեն: Պլանավորման փուլում այդպիսի մեխանիզմներ ևս չկան:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական գործունեության բացակայությունը խիստ բացասաբար է անդրադառնում դասավանդման և ուսումնառության գործընթացների վրա: Համալսարանը պետք է մշակի

հետազոտության ռազմավարություն՝ սահմանելով հստակ նպատակները, վերջիններս փոխկապակցելով միմյանց հետ, և հատկացնի համապատասխան ֆինանսական և նյութական ռեսուրսներ:

Եթե հետազոտություն չի իրականացվում, ապա ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ իրականացվող քայլերը արդյունավետ չեն կարող լինել: Ուսանողների և դասախոսների շարժունության ապահովումը միջազգային ասպարեզում բավականին մեծ չափով կախված է հետազոտական գործընթացների միջազգայնացումից, որի բացակայությունը ԵԳՀ-ում ակնհայտ է: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը դրական է գնահատում ՊԴԱ կազմի գիտական հոդվածների ժողովածուի տպագրությունը: Փորձագիտական խումբը նաև խրախուսում է բուհի նախաձեռնությունը 2013-18 թվականների ռազմավարական ծրագրով պլանավորված գիտական կենտրոնների հիմնումը գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման նպատակով, որոնք կնպաստեն գյուղատնտեսության ոլորտում հետազոտությունների կատարմանը:

Հաշվի առնելով այն փաստը, որ բուհում բացակայում է հետազոտական գործունեությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 6-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. մշակել հետազոտության ոլորտում բուհի հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայող ռազմավարություն՝ ՊԴԱ կազմին և ուսանողներին ակտիվորեն ներգրավելով գիտահետազոտական գործունեության մեջ,
2. մշակել հետազոտության ռազմավարության իրականացման և որակի վերահսկման մեխանիզմներ և գործիքներ,
3. մշակել միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր՝ հիմնվելով բուհի հետազոտական հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայտող ռազմավարության վրա,
4. քայլեր ձեռնարկել պլանավորված հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ, (այդ թվում՝ դասախոսական կազմի և ուսանողների օտար լեզվի բարելավում),
5. ուսումնական գործընթացում ներգրավել գիտական աստիճան ունեցող ավելի մեծ թվով դասախոսներ,
6. փոխկապակցել հետազոտական գործունեությունն ուսումնական գործընթացի հետ՝ ներդնելով համապատասխան քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄՈՒՀ-ը ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՔԱՍՏԵՐ

7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր

Բուհն ուսումնական գործունեությունն իրականացնում է վարձակալված տարածքում: ԵԳՀ-ի մասնաշենքում են գործում բոլոր վարչական և ուսումնամեթոդական կառույցները, մասնավորապես՝ տնտեսագիտության, հայոց լեզվի և գրականության, հագուստի մոդելավորման, դիզայներական, համակարգչային կաբինետները, ինչպես նաև ֆիզիկայի, քիմիայի և տեխնոլոգիական լաբորատորիաները: ԵԳՀ-ի լաբորատորիաներում առկա սարքավորումները բավականին հին են: Այդ պատճառով ներկայումս բուհը պայմանագրային հիմունքներով համագործակցում է մի շարք կենտրոնների, լաբորատորիաների հետ (ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Նարեկ լաբորատորիա և այլն)՝ որոշ դասընթացների լաբորատոր պարապմունքներն այնտեղ իրականացնելու նպատակով: Համալսարանի տարածքում չկա հասանելի և ազատ wifi ինտերնետ: Ըստ դասախոսների և ուսանողների՝ ընդհանուր առմամբ բուհի ռեսուրսները բավարարում են կրթական պահանջներին, այնուամենայնիվ նյութատեխնիկական բազան բարելավման և համալրման անհրաժեշտություն ունի: Համալսարանի գրադարանում գրականությունը հին է, ինչպես նաև բացակայում է գրադարանի համալրման քաղաքականությունը: Համալսարանը պայմանագրեր ունի Հայաստանի ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի հետ, որոնք բուհին սահմանափակ ժամկետով տրամադրում են անհրաժեշտ գրականություն:

7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար

ԵԳՀ եկամուտները ձևավորվում են ուսանողների ուսման վարձավճարներից, իսկ ծախսերը բաշխվում են հետևյալ ուղղություններով. գրասենյակային և կոմունալ ծախսեր, վարչական այլ ծախսեր, ապրանք և վարձակալություն, ամորտիզացիա, գովազդ, աշխատավարձ, հարկեր: Բուհում չկա ըստ կրթական ծրագրերի նպատակների ֆինանսական ռեսուրսների բաշխման հաստատված քաղաքականություն: Բուհը ռազմավարական նպատակների իրագործման համար հատկացնում է տարեկան բյուջեի մոտ 10%-ը: Մինչ օրս ֆինանսական ռեսուրսների և բյուջեի բաշխման արդյունավետության գնահատում չի իրականացվել: Համալսարանում բացակայում են ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը գնահատող հստակ մեխանիզմներ: Ըստ ռազմավարական ծրագրի նախատեսվում է մինչև 2018թ.-ը բարելավել նյութատեխնիկական բազան (լաբորատոր սարքավորումներ, նոր տեխնոլոգիաներ, գիտամեթոդական աշխատանքների բազա): Ներկայումս համալսարանը ֆինանսական միջոցները ծախսում է ըստ անհրաժեշտության և առաջնահերթության (աշխատավարձ, վերանորոգման աշխատանքներ, կրթության բարելավման ուղղությամբ գնումներ և այլն):

7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն

ԵԳՀ-ի կողմից մշակված 2013-2018 ռազմավարական ծրագիրն իր մեջ ներառում է ֆինանսների պլանավորում և համապատասխան ռազմավարական ուղղությունների վրա հստակ ծախսերի կանխատեսում և իրականացում: Ֆինանսական միջոցների բաշխումն իրականացվում է ելնելով բուհի պահպանման և որպես կազմակերպություն նրա գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերից. առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների բաշխում չի իրականացվում:

7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը

ԵԳՀ-ի ռեսուրսային բազան ապահովում է մասնագիտական կրթական ծրագրերի մասնակի իրականացում, քանի որ գյուղատնտեսական ուղղվածության երկու կրթական ծրագրերը պահանջում են բավականին մեծ ռեսուրսներ լաբորատոր պարապմունքների իրականացման, ինչպես նաև ուսանողների մոտ որոշակի մասնագիտական հմտություններ և կարողություններ ձևավորելու նպատակով:

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ

ԵԳՀ-ում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է՝ ըստ համապատասխան կանոնակարգի: Ներկայումս գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգը ներառում է մուտքի և ելքի փաստաթղթերի ձևաչափերը ու շրջանառությունը, և քիչ է անդրադառնում բուհի ներսի փաստաթղթաշրջանառությանը: Տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգեր բուհում չկան: Գործընթացների արդյունավետությունն ստուգող գործիքներ որպես այդպիսին բուհում ձևավորված չեն և գտնվում են քննարկման և մշակման փուլում: ԵԳՀ-ում ներդրվել է համակարգչային ցանցային մեխանիզմ, որի միջոցով մասամբ կարգավորվում է տեղեկատվության տրամադրումը:

7.6. ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին

ԵԳՀ-ում առկա է բուժկետ, որը գտնվում է ընդհանուր գծերով պրոռեկտորի ենթակայության տակ: Սակայն, այցելության ժամանակ պարզվեց, որ բուժկետում չկա համապատասխան աշխատող: Անվտանգության ապահովման նպատակով համալսարանի բոլոր հարկերում տեղադրվել են տեսախցիկներ, որոնք էապես մեծացնում են անվտանգության պահպանումը: Համաձայն աշխատակիցների և ուսանողների շրջանում համալսարանի կողմից անցկացված հարցումների, անվտանգության և առողջապահական ծառայությունները հիմնականում բավարարում են բուհի գործունեությանը, սակայն ունեն բարելավման և արդիականացման անհրաժեշտություն: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ բուհը գտնվում է բավարար սանիտարական վիճակում: Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության համար համալսարանում բացակայում են համապատասխան պայմանները: Արտակարգ իրավիճակների դեպքում լրացուցիչ ելքերը նույնպես բացակայում են:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ

ԵԳՀ-ում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործիքներ մինչ օրս ներդրված չեն, բացառությամբ ինքնավերլուծության շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հարցումների: Գնահատելով դրա արդյունավետությունը, բուհը նախատեսում է իրականացնել կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրեր, ինչպես նաև կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծություն: Ըստ ուսանողների և դասավանդողների՝ ռեսուրսները ձեռք են բերվում ելնելով անհրաժեշտությունից:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Թվում է՝ համալսարանը մտահոգված է, կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսների ապահովմամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի

շենքային պայմանները (լսարաններ) բավարար են տեսական և որոշ գործնական դասընթացներն իրականացնելու համար, չնայած որ լսարանները հագեցած չեն աուդիովիզուալ սարքավորումներով, չկա ուսանողներին հասանելի ինտերնետ: ԵԳՀ լաբորատորիաներում առկա սարքավորումները բավականին հին են և բավարար չափով չեն կարող նպաստել կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Բուհում առկա լաբորատոր բազան, գրականության ֆոնդը և ուսումնամեթոդական նյութերը չեն կարող լիարժեք ապահովել բուհում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը: Գրադարանը և տեղեկատվական կենտրոնը կարևոր տարրեր են հետազոտական միջավայր և մշակույթ ստեղծելու գործում, իսկ դրանց ռեսուրսային ապահովվածության մակարդակը բուհում խիստ ցածր է: Համալսարանում առաքելության ու նպատակների, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման և շարունակականության ապահովման նպատակով ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականության բացակայությունը թուլացնում է ֆինանսական ռեսուրսների նպատակային և ուղղորդված օգտագործումն ու արդյունավետությունը: Այս տեսակետից ռեսուրսային բազան մասամբ է հնարավորություն ընձեռում ռազմավարական պլանով ամրագրված նպատակների և առաջնահերթությունների իրականացման համար, որը կնպաստեր որակի շարունակական բարելավմանը և կայունությանը: Հարկ է նշել, որ վարձակալությամբ օգտագործվող տարածքը ևս կասկածի տակ է դնում ծրագրերի իրականացման կայունությունը և շարունակականությունը: Առկա ռեսուսները թույլ են տալիս ապահովել կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ներկա պահին, սակայն բյուջեն թույլ չի տալիս ապահովել դրանց շարունակականությունը և զարգացումը:
Համալսարանում շատ հարցեր լուծվում են բանավոր հանդիպումների միջոցով, առանց պաշտոնական փաստաթղթավորման (դիմում, զեկուցագիր, շրջաբերական և այլն), որն իհարկե էապես արագացնում է հարցերի քննարկման ընթացակարգը, սակայն մյուս կողմից չի նպաստում բարձրացվող հարցերի ֆորմալացմանը: Ըստ էության, համալսարանում չի իրականացվում փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն:

Համալսարանն ունի բավարար անձնակազմ և միջոցներ համապատասխան սանիտարական մակարդակ ապահովելու համար: Ճիշտ է, համալսարանում տեղադրված անվտանգության տեսախցիկներն նպաստում են անվտանգության ապահովմանը, սակայն բուժկետում համապատասխան աշխատակցի բացակայությունը, անվտանգության լրացուցիչ ելքերի բացակայությունը նվազեցնում են արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու հնարավորությունները: Այդուհանդերձ հարկ է նշել, որ համալսարանում առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ոչ մի ծառայություն չի իրականացվում:

ԵԳՀ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ են համարվում հարցումները, սակայն դրանց արդյունքները չեն արտացոլում ռեսուրսների հասանելիության և արդյունավետության իրական վիճակը: Հասանելիության գնահատման մասին տեղեկատվությունը բացակայում է, իսկ արդյունքների հիման վրա կայացված որոշումների մասին շահակիցներն իրազեկված չեն:

Հաշվի առնելով, որ համալսարանի հատկապես լաբորատոր ռեսուրսային բազան և համալսարանում ֆինանսական ծախսերի բաշխման և դրա արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմները բավարար չեն գյուղատնտեսական ոլորտի մասնագետներ պատրաստելու, ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 7-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. փնտրել ֆինանսավորման արտաքին աղբյուրներ՝ կրթական ծրագրերով պլանավորված նպատակները լիարժեքորեն իրականացնելու համար (խորհրդատվություններ, տարբեր ծառայություններ և այլն),
2. բարելավել համալսարանի ուսումնանյութական բազան, ենթակառուցվածքը, լաբորատորիաների հագեցվածությունը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ապահովելու նպատակով,
3. կատարել բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, որն էականորեն կմեծացնի ֆինանսական տարում կատարվող ծախսերի արդունավետությունն ու նպատակահարմարությունը,
4. մշակել կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը միտված կարիքների վերհանման մեխանիզմներ,
5. ստեղծել և ներդնել ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխման քաղաքականություն,
6. մշակել բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմ,
7. մշակել տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգեր,
8. ներդնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, որը կհամապատասխանի տեղեկատվության կառավարման քաղաքականությանը և ընթացակարգերին,
9. վերլուծել՝ որքանով են առկա ռեսուրսները ապահովում անհրաժեշտ միջավայր՝ ռազմավարական պլանի նպատակներից բխող կրթական գործունեությունն իրականացնելու համար,
10. մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ

Հաշվետվության համակարգը ԵԳՀ-ում իրականացվում է ռեկտորի տարեկան հաշվետվությունների և որոշ ենթակառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունների միջոցով: Բուհում բացակայում են նաև հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության գնահատման ցուցիչները: Այնուամենայնիվ, բուհը մինչ 2016թ-ը ռազմավարական ծրագրում նախատեսում է զարգացնել արտաքին հաշվետվողականության համակարգը և ապահովել ներբուհական գործընթացների թափանցիկությունն արտաքին շահակիցներին:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը

ԵԳՀ-ն իր ընթացակարգերը և գործընթացները հասարակությանը թափանցիկ և հասանելի դարձնելու նպատակով ՌԾ-ում ամրագրել է խնդիր՝ բարելավել լրատվության ապահովումը, ինչը փորձում է իրականացնել նորաստեղծ վեբ-կայքի միջոցով: ԵԳՀ նոր կայքը՝ http://www.yau.am/, որն արտացոլում է հաստատության կողմից իրականացվող որոշակի գործընթացներ, ամբողջովին պատկերացում չի տալիս բուհի գործունեության վերաբերյալ: Բուհ-ը դիմորդներին ներգրավելու նպատակով իրականացնում է ուսանողների այցելություն դպրոցներ, տարածում է պաստառներ, սկավառակներ, բուկլետներ, թեև վերջիններս ներառում են նաև ոչ ստույգ տեղեկատվություն և ունեն վերանայման անհրաժեշտություն (մասնավորապես՝ բուկլետներում բուհ-ի գովազդային նկարների շարքում առկա են նկարներ, որոնք չեն արտացոլում բուհի իրական պատկերը): Բուհը հասարակությանը տրամադրում է կամավորական և բարեգործական հիմունքներով ծառայություններ, որին մասնակցում են բուհի ուսանողները (ամանորյա այցերը ծերանոցներ, ծառատունկեր, բերքահավաքի ժամանակ գյուղացուն օգնություն ցուցաբերելը և այլն):

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ

Համալսարանում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ չկան: Սակայն ԵԳՀ-ն կարևորում է նման կապի առկայությունը, և որոշակի գործընթաց ոչ ֆորմալ ձևով իրականացվում է, մասնավորապես՝ քննարկումներ գործատուների հետ, պրակտիկայի ղեկավարների հետ: Այդուհանդերձ, արտաքին շահակիցները դեռևս ներգրավված չեն ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման գործընթացում: Համալսարանը նորաստեղծ Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միության միջոցով նախատեսում է, հնարավորության սահմաններում, հետազոտել և ներդնել նման գործընթացի կայուն հիմքեր:

8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում՝ ԵԳՀ-ն իրականացրել է 10 գործազուրկի վերապատրաստում որպես հրուշակագործ, իսկ վերջում աջակցել է նրանցից 2-ին աշխատանքի տեղավորման հարցում: Բուհն առաջարկում է խորհրդատվական ծառայություններ իրավագիտության ոլորտում, սակայն մինչ օրս ոչ ոք չի դիմել: Բուհի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման, ինչպես նաև հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման այլ մեխանիզմներ ներդրված չեն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության ներկայացման մեխանիզմը ԵԳՀ-ում լիարժեք չէ, քանի որ արտացոլված է միայն ռեկտորի տարեկան հաշվետվություններով և որոշ ստորաբաժանումների հաշվետվություններով, որոնք, թերևս, բավականաին մակերեսային են, ուսումնական գործընթացի վերլուծություն չեն պարունակում և պարբերական բնույթ չեն կրում: Ավելին հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետությունը դեռևս ուսումնասիրված չէ: Փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանն ապահովվում է մասնակիորեն: Բուհը որպես գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմ է դիտարկում

նորաստեղծ կայքէջը, որը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս բուհի գործընթացների վերաբերյալ և չի ապահովում ՄՈՒՀ-ի ընթացակարգերի և գործընթացների հասանելիությունը հասարակությանը: Հասարակական պատասխանատվության տեսանկյունից բուհի կարևոր գործառույթներից է հանդիսանում հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմի առկայությունը, որը հնարավոր է իրականացնել հաշվետվողականության և արժեքների փոխանցման համակարգերի միջոցով: Թեև բուհում ոչ ֆորմալ կերպով ապահովվում է հետադարձ կապ շահակիցներից, այնուամենայնիվ չկա այդ մոտեցումների արդյունավետության պարբերական վերլուծություն, և ուսումնասիրված չէ, թե որքանով են դրանք նպաստում հանրության հետ ամուր և արդյունավետ կապերի հաստատմանը: Բուհը հասարակության հետ ամուր կապերի ձևավորումը կապում է նորաստեղծ կարիերայի կենտրոնի հետ, սակայն վերջինիս գործունեությունը մինչ օրս արդյունավետ չի կարելի համարել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ բացակայում են համապատասխան տվյալների բազաները, արտաքին շահակիցների հետ համագործակցությունը թույլ է և ֆորմալ բնույթ են կրում, իսկ ուսանողների մեծ մասը տեղյակ չէ կառույցի գոյության մասին:

Փորձագիտական խումբը չափանիշ 8-ը գնահատում է բավարար, հաշվի առնելով բուհի ջանքերը հաշվետվողականության համակարգի ներդրման և բուհի գործընթացների թափանցիկության ապահովմանը ուղղված: Ողջունելի է, որ բուհը վերանայել է կայք էջը, սակայն վերջինս տեղեկատվության առումով հարստացման և թարմացման անհրաժեշտություն ունի: Փորձագիտական խումբը հույս ունի, որ նորաստեղծ կարիերայի կենտրոնը կնպաստի հասարակության հետ ամուր կապերի ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 8-ը գնահատում է բավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. գնահատել առկա ներքին հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը և ներդնել արտաքին հաշվետվողականության համակարգ
2. ապահովել ներբուհական գործընթացների թափանցիկությունը արտաքին շահեկիցների համար,
3. հարստացնել կայք էջը և ավելի կիրառական դարձնել,
4. մշակել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականություն, ընթացակարգեր և հստակ մեխանիզմներ,
5. վերլուծել շահակիցներից հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմների արդյունավետությունը,
6. ներդնել հասարակությանը ազդարարային ոլորտի գիտելիքների փոխանցման մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է

Համալսարանը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայանացմանը նպաստող միջավայրի ստեղծումը, ավելին՝ 2013-2018թթ ռազմավարական ծրագրում ամրագրված են միջազգայնացման խնդիրները, այնուամենայնիվ, միջազգայնացման զարգացման ռազմավարություն և արտաքին կապերի հաստատմանն ուղղված մշակված քաղաքականություն և ընթացակարգեր դեռևս չկան: Համալսարանը չի իրականացնում համատեղ կրթական ծրագրեր և հետազոտական ծրագրեր: Համալսարանը պլանավորում է մշակել միջազգայնացման ռազմավարություն:

9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց

Համալսարանում արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածք, որպես այդպիսին, դեռևս չի ձևավորվել, չկա արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման կանոնակարգված գործընթաց: Չնայած որ բուհի ներկայացուցիչները կարևորում են միջազգային փորձի ներդնումը և փոխանակումը:

9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ

Ուսանողների կրթական, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների անցկացման նպատակով բուհը պայմանագրեր է կնքել մի շարք լաբորատորիաների և կազմակերպությունների հետ: Դասընթացների լաբորատոր պարապմունքների կազմակերպման, պրակտիկայի անցկացման առումով համալսարանն արձանագրել է որոշակի հաջողություններ: Պայմանագրեր են կնքվել նաև ԱՊՀ երկրների երիտասարդների միավորման, Մոսկվայի Սիներգիա համալսարանի և Տնտեսագիտության, ֆինանսների և միջազգային առևտրի Ղազախական համալսարանի հետ, որոնց շրջանակներում նախատեսվում է իրականացնել համագործակցություն կրթության ոլորտում, ինչպես նաև կազմակերպել ուսանողների և աշխատակիցների փոխանակման ծրագրեր: Սակայն կնքված պայմանագրերի շրջանակներում մինչև այժմ որևէ գործընթաց չի իրականացվել, չնայած որ պայմանագրերը կնքվել են 2011 և 2012թթ.-ին:

9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար

Ուսումնական պլաններով նախատեսված է օտար լեզվի ուսուցում, այնուամենայնիվ, ինչպես փաստում են ուսանողները, սահմանված ժամաքանակները և ծրագրերը չեն երաշխավորում ուսանողների օտար լեզուների իմացության պատշաճ մակարդակ և մասնագիտական օտար լեզվին տիրապետման հմտություններ: Համալսարանի վարչական և դասախոսական կազմի ոչ բոլոր անդամներն են տիրապետում անգլերեն լեզվին բավարար չափով: Բուհում իրականացվել են օտար լեզվի դասընթացներ, սակայն 15 օր տևողությամբ և վերապատրաստումներին մասնակցել են սակավաթիվ դասախոսներ: Թե դասախոսների, թե ուսանողների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը լուրջ խոչընդոտ է շարժունության համար:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ համալսարանի ղեկավարությունը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը, այնուամենայնիվ հստակ չէ, թե բուհը ինչպես է պատրաստվում ապահովել համապատասխան միջավայր: Խումբը հրատապ է համարում միջազգայնացման ռազմավարության ստեղծումը, որը հաշվի կառնի համալսարանի առկա ներուժը և կնախանշի զարգացման առաջնահերթությունները: Շատ կարևորվում է միջազգայնացման կազմակերպման և զարգացման նպատակով ֆինանսական և համապատասխան մարդկային ռեսուրսների տրամադրումը: Միջազգայնացման զարգացմանը մեծապես կնպաստի նաև համապատասխան ստորաբաժանման հիմնումը: Փորձագիտական խմբի կարծիքով, արտաքին կապերի ստորաբաժանման բացակայությունը չի կարող նպաստել շարժունությանը, գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացմանը, համատեղ ծրագրերի և նախագծերի նախաձեռնմանը և իրականացմանը: Կառույցի բացակայությունը հարցականի տակ է դնում ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրների արդյունավետ իրականացումը: Տեղական կառույցների հետ համագործակցությունը, փորձագիտական խումբը դրական է գնահատում, քանի որ դասընթացների լաբորատոր պարապմունքների, պրակտիկաների անցկացման առումով համալսարանն արձանագրել է որոշակի հաջողություններ, իսկ այդ համագործակցություններն ապահովում են ցանկալի արդյունք: Ինչը չի կարելի ասել միջազգային համաձայնագրերի մասին: Թեև համալսարանը պայմանագրեր ունի միջազգային որոշ կազմակերպությունների հետ, սակայն այդ պայմանագրերի շրջանակներում ոչինչ չի իրականացվել: Ավելին՝ դրանց չգործելու պատճառները երբեք չեն ուսումնասիրվել, առկա խոչընդոտներն ու խնդիրները չեն քննարկվել: Մտահոգիչ է նաև ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, քանի որ վերջինս լուրջ խոչընդոտ է բուհի գործընթացների միջազգայնացման:Օտար լեզվի թերի իմացության հանգամանքը բացասական ազդեցություն կարող է ունենալ նաև բուհի գործունեության և ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման վրա:

Հաշվի առնելով, որ բուհի միջազգայնացման նպատակները չափազանց հավակնոտ են, բուհում բացակայում է համակարգային մոտեցումը միջազգայնացմանն ուղղված, չկան արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 9-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. մշակել քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք ուղղված կլինեն համալսարանում փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելուն;
2. միջազգայնացման նպատակով ստեղծել համապատասխան ստորաբաժանում կամ ունենալ պատասխանատու անձ՝ իր գործունեության ոլորտի և գործառույթների հստակ կանոնակարգումով,
3. ակտիվացնել արտաքին կապերը տեղական բուհերի հետ, ստորագրված միջազգային համաձայնագրերը, ինչպես նաև կնքել նոր իրատեսական համաձայնագրեր,
4. ուս. պլաններում վերանայել՝

- օտար լեզուների դասավանդման թեմատիկ պլանները՝ շեշտադրելով մասնագիտական օտար լեզվի ուսուցումը,
- դասավանդման մեթոդները՝ կարևորելով մասնագիտական օտար լեզվի հմտությունների ձևավորումը,

5. վերանայել ՊԴԱ և վարչական անձնակազմի համար կազմակերպվող օտար լեզվի դասընթացների ծրագիրը և ավելի մեծ թվով մասնակիցներ ներգրավվել:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր

Համալսարանն ունի Որակի ապահովման և ներքին աուդիտի կենտրոն, մշակվել են կենտրոնի կանոնադրությունը, ՈԱ քաղաքականությունը և մի շարք այլ փաստաթղթեր: Ներկայումս բուհում որպես ՈԱ մեխանիզմ դիտարկվում են միայն հարցումները, պարբերական քննարկումները: ՄԿԾ-ի բարելավման գործընթացում ՈԱ կենտրոնը դեռևս մասնակցում է ոչ ֆորմալ կերպով՝ ամբիոնի վարիչների հետ քննարկումների միջոցով: ՈԱ մեխանիզմների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Որակի ապահովման ձեռնարկը նախատեսվում է մշակել մինչև 2015 թ.-ը:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ

ԵԳՀ-ն որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ. ունի ձևավորված կենտրոն՝ համապատասխան աշխատակիցներով և տեխնիկայով: Այդ կառույցի գործունեությունը բուհը համարում է անհրաժեշտ և կարևոր, սակայն արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Հարկ է նշել, որ կենտրոնի աշխատակիցների աշխատանքի բաշխումը ՈԱ գործընթացներում հստակեցված չէ: Աշխատակիցները բավարարված են առկա ռեսուրսներով:

10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Բուհը կարևորում է որակի ապահովման գործընթացներում ուսանողների և այլ շահակիցների ներգրավվածությունը: Ներքին շահակիցները մասնակիորեն (ինքնավերլուծության շրջանակներում) ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, ինչը չի կարելի ասել արտաքին շահակիցների ներգրավվածության մասին: Ուսումնասիրված չէ ներքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը:

10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է

Համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի վերանայում դեռևս չի իրականացվել: ՈՆԱ համակարգը ձևավորման փուլում է: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը ՈՆԱ համակարգի ներդրման առաջին քայլն էր: Որակի ապահովման և ներքին աուդիտի կենտրոնը նոր է ստեղծվել: Ներկայումս առկա տեղեկատվությունը սահմանափակվում է ինքնավերլուծության շրջանակներում կազմակերպված մեկանգամյա

հարցման արդյունքներով: ՊԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ, իսկ իրականացվող գործողությունները շարունակական բնույթ չեն կրում: Բուհը նախատեսում է իրականացնել որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ:

10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար

Բուհը փորձել է ներդնել որակի ապահովման ներքին համակարգ իր ընթացակարգերով և մեխանիզմներով, սակայն գործող համակարգն իր ներկա գործառույթներով չի տրամադրում անհրաժեշտ տվյալներ և հիմքեր արտաքին գնահատման գործընթացների համար:

10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար

Բուհի գործունեության մասին որոշ տեղեկատվություն է ապահովում նորաստեղծ կայքը, սակայն կայքի տվյալները բուհի գործընթացների որակի մասին համապատասխան նյութեր չեն պարունակում: Որակի ապահովման ներքին համակարգն առայժմ չի ապահովում թափանցիկություն արտաքին շահակիցների համար՝ ԵԳՀ-ի գործընթացների որակի մասին տրամադրելով անհրաժեշտ տեղեկություններ: Կրթական ծրագրերի և հաստատության որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հաշվետվությունները դեռևս հանրային մակարդակով հասանելի չեն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵԳՀ-ն ունի որակի ներքին ապահովման քաղաքականություն, որը, սակայն, բավական ընդհանարական է և գործողությունների մակարդակով հստակեցման անհրաժեշտություն ունի: Վերջինս հնարավորություն չի տալիս ստուգելու դասավանդման, դասախոսական կազմի և ՄԿԾ-ների որակները: Փորձագիտական խումբը նկատեց, որ թեև որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ԵԳՀ-ն տրամադրում է մարդկային ռեսուրսներ, այդուհանդերձ նրանց պարտականություններն ու գործառույթները հստակ սահմանված չեն և բաշխվում են ըստ անհրաժեշտության՝ ոչ ֆորմալ կերպով, ինչը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ որակի ապահովման գործընթացների կառավարման և հետագա զարգացման տեսանկյունից: Խումբը անհրաժեշտություն է տեսնում որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետության պարբերաբար գնահատման:

Թեև, ժամանակ առ ժամանակ որակի ապահովման նպատակով կիրառվել են որոշ գործիքներ (ինչպես օրինակ՝ ուսանողական հարցումներ) և որակի արտաքին գնահատման համար համապատասխան տվյալներ են հավաքագրվել, սակայն հիմնականում ինքնավերլուծության զեկույցի պատրաստման շրջանակներում, և դրանք էլ բավարար հիմք չեն ընձեռնում արտաքին գնահատումների համար: Բուհի կողմից որակի ապահովման գործընթացների կարևորումը, որոշ գործընթացների կանոնակարգումը, դրանցում ներքին շահակիցների ներգրավումը վստահություն է ներշնչում մոտ ապագայում որակի ապահովման համակարգի ձևավորման տեսակետից: Ինչպես նաև արտաքին շահակիցների, մասնավորապես՝ աշխատաշուկայում գործող ԵԳՀ-ի շրջանավարտների ներգրավվումը բուհի որակի ապահովման գործընթացներում կնպաստի կենտրոնի գործառույթների բարելավմանը: Այնուամենայնիվ, որակի ապահովման գործընթացների ոչ պարբերական լինելը, այդ գործընթացներին արտաքին շահակիցների պասիվ մասնակցությունը, տեղեկատվության կառավարման համակարգի բացակայությունը (ներառյալ կրթական ծրագրերի վերաբերյալ

քանակական և որակական տվյալներ և այլն.) կխոչընդոտեն բուհի գործունեության շարունակական բարելավմանը: ՈԱ կենտրոնի գործընթացները սկսվել են հավատարմագրման գործընթացի հետ: Թեև կարճ ժամանակահատվածում որոշակի առաջընթաց դիտարկվում է, այնուամենայնիվ կենտրոնը չունի բավականաչափ փորձ և գործընթացների վերաբերյալ հավաքած անհրաժեշտ տեղեկատվություն՝ համակարգի վերանայման համար: Ակնհայտ է, որ որակի մշակույթը դեռևս ամբողջովին ձևավորված չէ, իսկ ՊԻՍԲ շրջափուլը դեռ փակված չէ: Հիմնականում այն գտնվում է պլանավորում, մասամբ իրականացում, եզակի դեպքերում ստուգում փուլերում, իսկ բարելավումը մեծամասամբ բացակայում է:

Փորձագիտական խումբը գնահատում է բուհի ցանկությունը ստեղծել որակի ապահովման համակարգ, այդուհանդերձ գործող համակարգը դեռևս բավարար հիմքեր չի ապահովում արտաքին գնահատման համար, իսկ կիրառվող գործիքները ունեն բարելավման անհրաժեշտություն (հարցումները սիստեմատիկ չեն իրականացվում, վերջնարդյունքները հստակ սահմանված չեն, հարցվածների թիվն անբավարար է արդյունքները վավեր ճանաչելու համար, անցկացման ձևաչափը պետք է փոփոխվի): ՈԱ և ներքին աուդիտի կենտրոնի աշխատանքները չի կարելի համարել բավարար թափանցիկ հատկապես արտաքին շահակիցների համար: Դրա վառ վկայությունն է բուհի պաշտոնական կայքում որակի մասին տեղեկատվության բացակայությունը, ինչը խոչընդոտ կհանդիսանա դիմորդների գրավման գործընթացում:

Հաշվի առնելով, որ որակի մշակույթը բուհում դեռևս ձևավորված չէ, իսկ որակի կառավարման ՊԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ և բուհը շատ անելիքներ ունի այս ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԳՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 10-ը գնահատում է անբավարար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Խորհուրդ է տրվում՝

1. վերանայել ԵԳՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը՝ գործողությունների մակարդակով ավելի հստակ դարձնելով,
2. բարելավել ՈԱ մեխանիզմները՝ վերանայելով գործիքակազմը,
3. գնահատել ՈԱ կենտրոնի գործունեության արդյունավետությունը (մշակել տվյալների հավաքագրման սխեմա/մեթոդաբանություն. ինչ հարցաշար է անհրաժեշտ մշակել, ում է այն ուղղված, ինչ հաճախականությամբ է անհրաժեշտ իրականացնել հարցումները...),
4. մշակել որակի ապահովման համընդգրկուն ձեռնարկ,
5. ներգրավել շահակիցներին (հատկապես արտաքին) ՈԱ գործընթացներում,
6. գնահատել ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը,
7. կատարել ՈԱ գործընթացների մշտադիտարկում,
8. ԵԳՀ կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԻՍԲ շրջափուլը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Անբավարար
III. Կրթական ծրագրեր	Անբավարար
IV. Ուսանողներ	Անբավարար
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Անբավարար
VI.Հետազոտություն և զարգացում	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Անբավարար
VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

11 հուլիսի 2014թ.

Աղավնի Հակոբյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1.ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աղավնի Հակոբյան – 2001.-ին ավարտել է «Գլաձոր» կառավարման համալսարանի Ֆինանսաներ և վարկի ֆակուլտետը, 2001-2005թթ-ը եղել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ, նույն թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն "Տնտեսական մրցակցության պաշտպանության արդի գերակայությունները ՀՀ օրինակով" թեմայով: Տնտեսագիտության թեկնածու է: 2007-2013թթ աշխատել է Երևանի Գլաձոր համալսարանում որպես ուսումնական մասի պետ, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ: 2013թ.-ից մինչ օրս աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում որպես արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ, Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ:

Գայանե Մարմարյան – 1995թ.-ին գերազանցությամբ ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան: 1995-1998թթ սովորել է ասպիրանտուրայում ՀԳԱ "կենսաքիմիա" մանագիտությամբ: 2000 թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Հայաստանում բուծվող կիսակոպտաբուրդ և կիսանրբագեղմ ոչխարների արյան և մաշկի կենսաքիմիական ցուցանիշները" թեմայով: Կենսաբանական գիտությունների թեկնածու է: 2004թ.ին ՀԳԱ գիտական խորհրդի կողմից շնորհվել է դոցենտի կոչում: 1998թ-ից մինչ օրս դասավանդում է ՀԱԱՀ կենսաքիմիայի ամբիոնում; 1995թ-ից մինչ օրս ծավալում է գիտաարտադրական աշխատանքներ Հայաստանի տարբեր մարզերում:

Գարեգին Համբարձումյան - 1999թ.-ին ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետը: 1999-2002թթ սովորել է ասպիրանտուրայիում Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի Անասնաբուժական սանիտարիայի, փորձաքննության և զոոհիգիենայի ամբիոնում: Անասնաբուժական գիտությունների թեկնածու է: 2003-2011թթ աշխատել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում որպես դասախոս, 2011թ-ից նաև կրթության բարեփոխումների և կրեդիտային համակարգի ներդրման առաջատար մասնագետ: 2011թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի պետական բժշկական համալսարանում որպես ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ:

Թեռ Վաբելս – 1974թ.-ին ավարտել է Ուտրեխտի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1984թ-ի դարձել է գիտությունների թեկնածու: 1973-1978թթ աշխատել է Մոնտեսորիի ավագ դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցիչ և տնօրենի օգնական: 1979-1985թթ աշխատել է Ուտրեխտի համալսարանում որպես դասախոս- ասիստենտ: 1990թ.-ին ստացել է դոցենտի կոչում: 2001թ.-ից մինչ օրս դասավանդում է Ուտրեխտի համալսարանում: 2005թ-ին մինչ օրս Ուտրեխտի համալսարանի սոցիալական ֆակուլտետի փոխդեկանն է, 2011թ-ից նաև ընդունելության գծով դեկան:

Լուիզա Աբրահամյան- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Հակաճգնաժամային կառավարման ֆակուլտետի ուսանողուհի: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի սոցիալական հանձնաժողովի անդամ, "Հավասարություն բազմազանության համար. սոցիալական հավասարությունը բարձրագույն կրթությունում" ծրագրի հեղինակ և համակարգող:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ՕՐԱԿԱՐԳ

12.05.2014 թ.–16.05.2014 թ.

	12.05.2014 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ռեկտորի հետ	9:15	9:30	15 րոպե
2	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:30	12:30	180 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
4	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	13:45	14:30	45 րոպե
5	Հանդիպում պրոռեկտորների հետ	14:45	15:30	45 րոպե
6	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	15:45	16:30	45 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:45	18:00	75 րոպե
	13.05.2014 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում ֆակուլտետների դեկանների և ուսումնական մասի վարիչի հետ	9:30	10:15	45 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:30	11:30	60 րոպե
4	Հանդիպում դասախոսների հետ	11:30	12:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
6	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	13:30	14:45	75 րոպե
7	Հանդիպում շրջանավարտների հետ	15:00	16:00	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:15	18:00	105 րոպե
	14.05.2014 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում ՈՒԽ անդամների հետ	9:30	10:15	45 րոպե
3	Հանդիպում ուսանողների հետ (բակալավրիատ, մագիստրատուրա)	10:30	11:30	60 րոպե
4	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	11:45	12:45	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (դիզայնի բաժին, IT կենտրոն, արտաքին կապեր, կարիերայի կենտրոն...)	14:15	15:00	45 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ...)	15:15	16:30	75 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե
	15.05.2014թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:00	9:15	15 րոպե
2	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	9:15	10:00	45 րոպե
3	Դասալսում	10:00	11:10	70 րոպե
4	Ռեսուրսների դիտարկում (այցելություն պրակտիկայի անցկացման վայրեր)	11:10	13:00	110 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	14:00	14:30	30 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:30	18:00	210 րոպե
	16.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:30	11:30	120 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:30	60 րոպե
3	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	12:30	13:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ/ Չափորոշիչ
1	Գիտական խորհրդի կազմը	II
2	Ուսումնաօժանդակ կազմի ցանկը և պարտականությունները	II
3	Կառավարման մարմնի կազմը	II
4	Գիտական խորհրդի կանոնադրություն	II
5	Ռեկտորատի կազմը և աշխատանքային պլան	II
6	Կառավարման մարմնի որոշման նախագիծ	II
7	Ամբիոններում որոշումների քննարկման մասին որևէ արձանագրություն	II
8	Գիտխորհրդի նիստերի որևէ արձանագրություններ	II
9	Աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվական բանկը կանոնակարգող փաստաթուղթ	II
10	Ամբիոնների, ֆակուլտետների կողմից բարձրացված խնդիրների վերլուծություն	II
11	Դասալսումների և համապատասխան քննարկումների վերաբերյալ որևէ արձանագրություն	II
12	Ուսումնական պլաններ՝ • Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա, • Ֆինանսներ • Անասնաբուժասանիտարական փորձաքննություն • Դիզայն • Իրավագիտություն	III
13	Կրթական ծրագրեր առկա և հեռակա ուսուցման համար՝ • Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա, • Ֆինանսներ • Անասնաբուժասանիտարական փորձաքննություն • Դիզայն • Իրավագիտություն	III
14	Առարկայական ծրագրեր ՝ • Անասնաբուժական սանիտարիա և փորձաքննություն • Ֆիզիոլոգիա • Կենսաքիմիա և կլինիկական կենսաքիմիա • Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության կենսատեխնոլոգիա • Բուսաբուծական մթերքների պահպանման և վերմաշակման տեխնոլոգիա • Ճյուղի արտադրության ստանդարտացում, սերտիֆիկացում և փորձաքննություն	III
15	Ըստ UNESCO CEPES-ի մշակված դիպլոմի հավելված	III
16	Իրականացվող պրակտիկաների որևէ օրագիր	III
17	Ուսանողի ուղեցույց	III
18	Գնահատականների բողոքարկման կարգ/ ընթացակարգ	III
19	Ուսանողների ինքնուրույն աշխատանքներ՝ ռեֆերատ, կուրսային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 2-ը՝ գերազանց և անբավարար գնահատված), խմբային աշխատանքներ	III

20	Ուսանողների ավարտական աշխատանքներ՝ թեզեր, դիպլոմային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 3-ը՝ բավարար, գերազանց և անբավարար գնահատված)	III
21	Պետական բուհերից փոխադրված և վերականգնված ուսանողների մեկական հրաման	III
22	Դասախոսների շարժունության մասին վկայող փաստաթղթեր (հրաման...)	III
23	Վերջին 5 տարիների ընթացքում ԵԳՀ-ից այլ բուհեր փոխադրված ուսանողների ցանկը՝ նշելով բուհ-ի անվանումը	IV
24	Վերջին 5 տարիների ընթացքում այլ բուհերից ԵԳՀ փոխադրված ուսանողների ցանկը՝ նշելով բուհ-ի անվանումը	IV
25	Ընդունելությունը հարզացրույցով կազմակերպելու ԿԳՆ թույլտվություն	IV
26	Բացակաների լրացման կարգ	IV
27	Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները՝ ըստ մասնագիտությունների (վերջին 3 տարիների համար)	IV
28	Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ներառող փաստաթուղթ/ ուղեցույց	IV
29	Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման կարգ	V
30	Դասախոսների հետ կնքվող պայմանագրի օրինակ	V
31	Ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի պաշտոնի անձնագիր	V
32	Դասախոսների բազային կրթությունը, և դասավանվող առարակների ցանկը	V
33	Ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցաթերթիկ	V
34	Ամբիոնի, ֆակուլտետի նիստերի արձանագրություններ դասախոսների գնահատման արդյունքների և դասալսումների քննարկման վերաբերյալ	V
35	Դասախոսների տպագրված հոդվածների ցանկ	VI
36	Գրադարանի 2130 անուն գրքերից ո՞ր մասն է ուսումնական, ո՞րը գիտական և ստանում է արդյոք գրադարանը գիտական ամսագրեր, եթե այո ապա ինչպիսի	VII
37	Կրթական նպատակների իրականացման և ձեռքբերումների գնահատման գործիքները	VII
38	Ֆակուլտետների, ամբիոնների տարեկան հաշվետվությունների օրինակ	VIII
39	Միջազգայնացմանը ուղղված միջոցառումների ՌԾ-ը	IX
40	Որակի ապահովման և ներքին աուդիտի կենտրոնի 2012-2013թթ. տարեկան հաշվետվություն	X

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Լաբորատորիաներ
3. Քիմիայի, ֆիզիկայի, դիզայնի կաբինետներ
4. Դեկանատներ
5. Ամբիոններ
6. Համակարգչային լսարան
7. Գրադարան
8. Ուսանողական խորհուրդ
9. Որակի ապահովման կենտրոն
10. Կարերայի կենտրոն
11. Սպորտդահլիճ
12. Բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ՈԱԱԿ**-"Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն" հիմնադրամ
2. **ՈԱՇ** - Որակավորումների ազգային շրջանակ
3. **ԵԿԿՓՀ**- Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
4. **ՈԱԵՉՈՒ**_ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
5. **ԿՀՑ**- Կատարողականի առանցքային ցուցիչներ
6. **ՊԻՄԲ**- Պլանավորել-իրականացնել-ստուգել-բարելավել
7. **ՈԱ**- Որակի ապահովում
8. **ՈԱԿ** – Որակի ապահովման կենտրոն
9. **ՀՀ**- Հայաստանի հանրապետություն
10. **ՌՊ** – Ռազմավարական պլան
11. **ՈՒԽ**- Ուսանողական խորհուրդ
12. **ԵԳՀ**- Երևանի գյուղատնտեսական համալսարան